AZG NEW PDF.qxd 26/08/2010 22:39 Page 1

Azg Ազգ

27 ՕԳՈՍՏՈՍ 2010 ՈՒՐԲԱԹ 154 (4534)

ISSN: 1829-1651

«Սերբիան պետք է ընդունի իրականությունը»

«Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարար **Գուիդո Վեստերվելեն** Սերբիա կատարած այցի ժամանակ հայտարարել է, որ Բելգրադը պետք է հաշտվի Կոսովոյի անկախության իրողությանը:

«Սերբիան պետք է ընդունի իրականությունը, իսկ Կոսովոյի անկախությունը իրականություն է», ասել է Վեստերվելեն եւ հիշեցրել, որ ըստ Հաագայի արդարադատության միջազգային դատարանի՝ Կոսովոյի անկախության հռչակագիրը չի հակասում միջազգային իրավունքին:

«Նրանք, ովքեր ցանկանում են միանալ Եվրոպական միությանը, պարտավոր են հավասարակշռված քաղաքականություն վարել, Եվրոմիության պահանջը գործնական երկխոսությունն է», ընդգծել է Գերմանիայի արտգործնախարարը, որի խոսքերը հաստատապես գործածելի են ոչ միայն Կոսովո-Սերբիա հարաբերությունների պարագայում:

Հ. Ա.

ԱՄՆ-ը N5-ը համարում է Ռուսաստան-Հայաստան երկկողմ հարց

Հայաստանի տարածքում ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետը երկարաձգելու արձանագրությունը, որ ստորագրվեց ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի՝ Հայաստան պետական այցի շրջանակներում, Միացյալ Նահանգները համարում է երկկողմ հարաբերությունների հարց Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ: Օգոստոսի 25-ին տեղի ունեցած մամուլի ամենօրյա ճեպազրույցում այսպես է ԱՄՆ-ի մոտեցումը ներկայացրել ԱՄՆ պետդեպարտամենտի մամուլի բաժնի խոսնակի տեղակալի պաշտոնակատար **Մարկ Թոները**, ընդ որում՝ խոսքից առաջ հավելելով «կարծում եմ» արտահայտությունը:

Հարցին, թե ինչպես է Միացյալ Նահանգները վերաբերում Ռուսաստան-Հայաստան պաշտպանական համաձայնագրին, հատկապես որ Ադրբեջանը դրանից «նեղվել» է, Թոները պատասխանել է, որ ԱՄՆ-ը Հայաստանի հետ ամուր գործընկերային հարաբերություններ ունի եւ բոլոր ակնկալիքները՝ որ այդ գործընկերությունը կշարունակվի:

«Միեւնույն ժամանակ, Ռուսաստանը Մինսկի խմբի անդամ է եւ կառուցողական դերակատարություն ունի որպես այդպիսին», այսքանով ԱՄՆ պետքարտուղարության ներկայացուցիչն ավարտել է իր արձագանքը հայ-ռուսական ստորագրված արձանագրությամբ ռազմակայանի տեղակայման ժամկետի երկարաձգման հարցին: Թեեւ վերջին միտքը Ռուսաստանի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ լինելու եւ կառուցողական դերակատարությամբ միջնորդական առաքելություն իրականացնելու մասին առանձնակի չի տեղավորվում հարցադրման պատասխանի ընդհանուր տրամաբանության մեջ:

Բայց եւ այնպես, հետաքրքրական է, որ Ռուսաստանի՝ ռազմական ներկայության առնչությամբ արձանագրության մասին ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչը որեւէ այլ բան չի ասել, քան ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցություններում միջնորդական առաքելություն իրականացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի Ռուսաստանի դերակատարության մասին նշելը, այն էլ՝ կառուցողական որակմամբ:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ»

Սոչիում՝ համաժողով՝ Ռուսաստանի հայկական սփյուռքի մասին

Օգոստոսի 28-ին Սոչիի «Խաղաղ Դոն» հանգստյան տանը բացվելու է «Ռուսաստանի հայկական սփյուռքը. ժամանակի մարտահրավերներ» անվանումը կրող միջազգային հասարակական երկօրյա համաժողովը, որի կազմակերպիչներն են Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթն ու 3 հեռուստաընկերությունը:

Կոնֆերանսին մասնակցելու են գիտնականներ ու հասարակական գործիչներ Մոսկվայից, Ռոստովի, Ստավրոպոլի, Կրասնոդարի երկրամասերից, Ադիգեյի Հանրապետությունից, Հայաստանից, ԼՂՀ-ից ու Աբխազիայից:

Կոնֆերանսի ժամանակ զեկույցներ են լինելու չորս թեմայի շուրջը՝ «Սփյուռք եւ Հայաստան», «Սփյուռք եւ Արցախ», «Սփյուռք եւ Հայ դաս», «Սփյուռք եւ հասարակություն»: Նշենք զեկույցներից մի քանիսի խորագիրը. «Ռուսաստանում հայկական սփյուռքի դերն ու խնդիրները հայ-ռուսական համագործակցության ամրապնդման գործում», «Ռուսաստանում հայկական սփյուռքի դերը համազգային խնդիրների լուծման գործում», «Ռուսաստանի հայկական սփյուռքի դերը ԼՂՀ-ի կայացման գործում», «Ռուսաստանում հայկական սփյուռքի ինքնակազմակերպման ձեւերը», «Ռուսաստանում ջավախքյան սփյուռքի դերը Ջավախքի հայ բնակչության շահերի պաշտպանության եւ կարերի ամրապնդման գործում», «Հայոց լեզուն այսօր եւ վաղը» եւ այլն: Եթե նշված վերնագրերի տակ ներկայացվող նյութերը բովանդակությամբ եւս վերնագրերի ողջ տարողությունն արտահայտեն՝ համաժողովը խոստանում է օգտակար եւ հետաքրքրական լինել:

Մայր Թերեզայի 100-ամյակը Կալկաթայում

2010 թ. օգոստոս 26-ին՝ որբեւայրիների եւ աղքատների գթության քույր Մայր Թերեզայի տարեդարձի օրը, Կալկաթայում մեկնարկեց նրա ծննդյան 100-ամյակին նվիրված տոնախմբությունը:

Կաթոլիկ մի քանի կազմակերպություններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ, Կալկաթայի արքեպիսկոպոս Լուկաս Սարքարի նախագահությամբ, կազմակերպել են Մայր Թերեզայի անվան երրորդ միջազգային կինոփառատոնը, որը կտեւի օգոստոս 26-29: Կինոփառատոնը միաժամանակ կանցկացվի նաեւ 17 երկրներում, այդ թվում՝ Վատիկանում, Ճապոնիայում, Հոնկոնգում, Թաիլանդում...

Տոնախմբության հանդիսավոր բացմանը Հայ առաքելական եկեղեցին ներկայացրեց հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Խորեն աբգ. Հովհաննիսյանը, ով հատուկ հրավիրված էր կաթոլիկ արքեպիսկոպոսի կողմից:

Բացման արարողությունից հետո ցուցադրվեց «Մայր Թերեզա» ֆիլմը: Փառատոնի ընթացքում կցուցադրվի եւս 15 ֆիլմ՝ բոլորն էլ նվիրված Գթության մորը:

Օգոստոսի 29-ից հետո փառատոնը Կալկաթայից կտեղափոխվի Հնդկաստանի տարբեր քաղաքներ:

Գթության քույրն ապրել է Կալկաթայում, հիմնադրել Գթության միաբանությունը, որը նրա մահից հետո էլ շարունակում է իր մարդասիրական առաքելությունը:

1988 թ.-ի երկրաշարժից հետո նա եկավ Հայաստան՝ մխիթարելու եւ աջակցելու տուժածներին:

Կալկաթայում գտնվող Մայր Թերեզայի տուն-թանգարանը, ուր ամփոփված է նրա աճյունը, ուխտատեղի է դարձել տեղացիների եւ այցելուների համար:

Սաակաշվիլու դեմ հայց՝ Հաագայի դատարան

Վրաց լեյբորիստները՝ ի դեմս լեյբորիստական կուսակցության նախագահ **Շալվա Նաթելաշվիլու**, հայց են ներկայացնում Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու դեմ՝ դիմելու Հաագայի միջազգային դատարան: Լեյբորիստները պահանջում են ձերբակալել եւ դատապարտել Սաակաշվիլուն:

Ըստ վրացական լրատվամիջոցների, Նաթելաշվիլին օգոստոսի 26-ը ամենաողբերգական օր է որակել Վրաստանի պատմության համար, քանի որ այդ օրը 2008 թ.-ին Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը: Ըստ Նաթելաշվիլու՝ «այդ ամենը տեղի չէր ունենա, եթե մինչ այդ արդեն պատերազմը տանուլ տված Սաակաշվիլին հեռանար նախագահի պաշտոնից»: Լեյբորիստական կուսակցությունը գտնում է, որ Սաակաշվիլուն նախագահական աթոռից կարելի է հեռացնել կա՛մ գահընկեց անելով, կա՛մ ձերբակալությամբ: «Առաջինը Վրաստանի համար ընդունելի չէ, ուստի դա պետք է իրականացվի ձերբակալության միջոցով՝ միջազգային կազմակերպությունների կողմից», ասել է Նաթելաշվիլին:

Նախապատրաստվող հայցը բաղկացած է հինգ էջից, պարունակում է 15 դրվագ:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Վլադիմիր Մարյանի լուսավոր հիշատակին՝ թատերագետ Լեւոն Մուքաֆյանի հրաժեշտի խոսքը:

Ամերիկահայ մեծանուն քանդակագործ Ռուբեն Նախյանը՝ վերջերս առաջին անգամ Հայաստան այցելած նրա ավագ որդու՝ Պոլ Նախյանի հետ հանդիպման տպավորություններում՝ Հակոբ Ծուլիկյանի ներկայացմամբ:

«Գործարար տիեզերք» ՍՊԸ «Հայաստան-2009» համահայկական գիտ-ուղեցույց» երկհատորյակը՝ Արգամ Այվազյանի քննական հայացքի ներքո:

2010 թ. Հալեպում լույս տեսած «Մարաշի ասեղնագործություն» ստվարածավալ հատորը՝ Հակոբ Ավետիքյանի ներկայացմամբ: Եվս մեկ գիրք վերջերս լույս տեսած՝ Հենրիկ Հովհաննիսյանի հեղինակությամբ. «Հայ թատրոնի պատմություն. XIX դար»՝ (երկրորդ լրամշակված հրատ.) գրականագետ Գուրգեն Գասպարյանի ներկայացմամբ:

Մ. Բ.

Իրանի փոխնախագահը 1915-ը կոչել է ցեղասպանություն՝ ներկայացնելով այն որպես չհնացող հարց

«Օսմանյան կառավարությունը մոտ 100 տարի առաջ՝ 1915 թվականին ցեղասպանություն է իրականացրել որոշ ճանակությամբ հայերի նկատմամբ: Ներկայումս չնայած վերացել է օսմանյան կառավարությունը, Հայաստանի կառավարությունը դեռեւս Թուրքիայից պահանջում է, որ այդ խնդրի համար պաշտոնապես ներողություն խնդրի եւ փոխհատուցում վճարի»: Այսպիսի հայտարարություն է արել Իրանի փոխնախագահ եւ Մշակութային ժառանգության, ձեռքի աշխատանքների եւ զբոսաշրջության գործակալության տնօրեն **Համիդ Բաղային** «Իրան. հաղթանակի կամուրջ» համաժողովում:

Ըստ Իրանի պաշտոնական լրատվական գործակալության՝ օգոստոսի 25-ին անցկացված համաժողովը վերաբերում էր 2-րդ համաշխարհային պատերազմում դաշնակիցների կողմից Իրանի գրավման 70-րդ տարելիցին, որտեղ էլ, ցանկանալով ընդգծել հարցի արդիականությունը եւ հնացած չլինելը, Բաղային տարբեր օրինակների շարքում նշել է նաեւ 1915թ, իրադարձությունների մասին՝ առանց որեւէ այլ ձեւակերպման կամ վերապահումների դրանք կոչելով ցեղասպանություն:

«Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Իրանին հասցված վնասների մասին պատմական փաստաթղթերի համաձայն, այդ խնդիրը միջազգային հանրությունում ենթակա է իրավական հետեւողականության», ասել է Բաղային, ավելացնելով, որ Իրանը պետք է հետեւողական լինի այդ խնդրում: Բաղային խոսքերով, Իրանի գրավումը խնդիր է, որ բացի իրավական ենթատեքստից, ունի նաեւ քաղաքական ենթատեքստ եւ «միջազգային հանրությունում նրա ներկայացմամբ կարելի է Ամերիկային, Ռուսաստանին եւ Անգլիային դուրս բերել հարցաքննությունից՝ հասկացնելով, որ Իրանը Երկրորդ համաշխարհային պատերազմում նրանց ոչնչացման խոչընդոտն է եղել»:

Իրանի փոխնախագահը հարցի հնացած չլինելու վկայության համատեքստում համեմատությամբ ներկայացրել է ինչպես Հայոց ցեղասպանության արծարծումն ու արդիականությունը, այնպես էլ այն, թե ինչպես Ճապոնիան համաշխարհային պատերազմում հիմնական կողմ լինելով, ներկայումս Ամերիկայից փոխհատուցում ստանալու պահանջատեր է դարձել ատոմային ռումբերից հասցված վնասների համար: Բաղային հիշեցրել է նաեւ Ռուսաստանից Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հասցված վնասների համար պահանջ ներկայացնող Լեհաստանի օրինակը:

«Տվյալ պայմաններում, երբ արծարծվում է Իրանի կողմից փոխհատուցում ստանալու խնդիրը, ոմանք ասում են՝ խնդիրը հնացել է եւ մենք չենք կարող արդյունքի հասնել այդ բնագավառում, մինչդեռ պետք է ասել, որ այդ խնդրի ներկայացմամբ մենք կարող ենք նվազագույնը ներողություն ստանալ (Ամերիկայից, Ռուսաստանից, Անգլիայից - Ա.Հ.): Իրանը գրավելու 5 տարիների ընթացքում մեր նավթը գնվել է ցածր գներով, կողոպտվել են պարենն ու ժողովրդի կեցության անհրաժեշտ ապրանքները, սպանվել են մեծ թվով մարդիկ եւ ոնձգության է ենթարկվել նրանց պատվախնդրությունը, եւ այդ վնասներն այնքան ծանր էին, որ երկիրը հետ գցեցին 50 տարով», հայտարարել է Բաղային:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW PDF.qxd 26/08/2010 22:08 Page 1

ԱԶԳ

Ընթացիկ

Ռուսական ռազմակայանը, ըստ Բաքվի, կասկածի տակ է դնում Հայաստանի անկախությունը

Քանի որ ամերիկյանը ընդլայնում է Թուրքիայի անկախությունը, թուրքականն էլ ավելի քան կընդլայնի Ադրբեջանինը

Հայաստանի տարածքում տեղակայված ռազմակայանի գործունեության երկարաձգման եւ գործառույթների ընդլայնման հայ-ռուսական արձանագրության ստորագրումը հավասարակշռությունից հանել է Ադրբեջանին: Օր չի լինում, որ ադրբեջանցի պետական գործիչները, քաղաքագետները, հասարակական կազմակերպությունների ղեկավարները հայտարարությամբ չարձագանքեն արձանագրությանը: Օրինակ, տխրահռչակ **Վաֆա Գուլիզադեն**, ինչպես «**Ազգը**» նշել է օգոստոսի 24-ի համարում, հայտարարել էր, որ Հայաստանն ու Ռուսաստանը արձանագրությամբ հզորացնում են ռազմակայանի կարողությունը, որպեսզի օկուպացնեն նաեւ Ադրբեջանի մնացյալ տարածքները: Ոմանք էլ հայ-ռուսական արձանագրությունը թուրք-ադրբեջանական դաշինքի ամրապնդմամբ հակակշռելու անխուսափելիության մասին են աղաղակում, որ Ադրբեջանի տարածքում թուրքական ռազմակայանի տեղակայման հարցը մտնի պաշտոնական Անկարայի եւ Բաքվի օրակարգ:

Այլ կերպ, հայ-ռուսական արձանագրության ադրբեջանական արձագանքները միանգամայն հիվանդագին են: Սակայն դա զարմանալի չէ այն առումով, որ հավասարակշռությունից դուրս եկող մարդու երեւակայությունը հիվանդոտ է դառնում հատկապես երբ խոսքը վերաբերում է հայ սպանելու համար մարդասպան ստահակին ազգային հերոս հռչակող ադրբեջանցի հրոսակին:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի մնացած տարածքների օկուպացմանը, ապա ասենք, որ օկուպացման համար Հայաստանը ռուսական ռազմակայանի կարիքը չունի, որովհետեւ Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած պատերազմում այնպիսի հակահարված է ստացել ադրբեջանական կողմը, «սումգայիթյան հերոսներ» հորջորջվող մարդասպանները զենքը շպրտելով առանց հետ նայելու այնպես են խուճապահար փախել ռազմի դաշտից, որ բորենիների ոհմակ հիշեցնող ադրբեջանական շաս փառապանծ բանակը լիակատար կազմալուծվել է. չթողնելով Բաքվին այլընտրանք, քան զինադադարի թախանձագին խնդրանքով Ռուսաստանի միջնորդության ադավինելը:

Ի գիտություն ասենք, որ Ռուսաստանը ոչ միայն մինչեւ 2044 թիվը երկարաձգել է Հայաստանում տեղակայված ռազմակայանի գործունեության ժամկետը, այլեւ ս. թ. ապրիլին Ուկրաինայի հետ ստորագրած պայմանագրով 49 տարով վարձակալել է Սեւաստոպոլի ռազմածովային բազան, որպեսզի Սեւ ծովում պահպանի իր ռազմական ներկայությունը: Հայաստանում տեղակայված ռուսական ռազմաբազան էլ Ռուսաստանին տալիս է Հարավային Կովկասում ռազմական ներկայությունը երկարաձգելու հնարավորություն, ինչի շնորհիվ նա սահմանափակում է Վրաստանի միջոցով արեւելյան Սեւ ծովը վերահսկելու եւ իր ազդեցությունը Հարավային Կովկասում տարածելու ԱՄՆ-ի հնարավորությունը:

Այսինքն, որքան էլ հայ-ռուսական արձանագրությունը թուրք-ադրբեջանական դաշինքի դեմ ամրապնդի Հայաստանի անվտանգությունը, դրա ստորագրման գլխավոր նպատակը ամենեւին էլ Ադրբեջանի մնացյալ տարածքների օկուպացումը չէ: Պարզապես օկուպացման վարկածն է ձեռնտու ադրբեջանցի հրոսակին, որ ֆշնի Արեւմուտքին: Կարծում ենք, Ադրբեջանին վախեցնողը մնացած տարածքների հայ-ռուսական օկուպացման հավանականությունը չէ: Նրան վախեցնում է արդեն ձանձրալի բնույթ ստացած ռազմատենչ հայտարարություններն ընդդեմ Հայաստանի կյանքի կոչելը, որովհետեւ մեկ անգամ արդեն ճաշակել է խայտառակ պարտությունը:

Թերեւս կարելի էր չանդրադառնալ այս ամենին, եթե Ադրբեջանի պաշտպանության նախարարության խոսնակ Էլդար Սաբիհոլլին կասկածի տակ չդներ Հայաստանի անկախությունը: Օգոստոսի 25-ին նա, թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, հայտարարել է, որ Հայաստանն այլեւս չի կարող հանդես գալ որպես անկախ պետություն, ավելացնելով. «Հանձնելով ազգային անվտանգության ապահովման գործը Ռուսաստանին, Հայաստանը ցույց տվեց աշխարհին, թե իբրեւ պետություն ինչ է իրենից ներկայացնում: Չի կարելի այլեւս Հայաստանին բնութագրել որպես անկախ պետություն: Միջազգային հանրությունը սկսել է կասկածանքով վերաբերվել նրան»:

Ի դեպ, Ապշերոն թերակղզում տեղակայված Գաբալայի ռազմակայանը նույնպես ռուսներն են վերահսկում: Ավելին, Ադրբեջանը՝ ի հակակշիռ հայ-ռուսական դաշինքի, երկրի տարածքում թուրքական ռազմակայան տեղակայելու պատրաստակամություն է հայտնում: Սակայն չենք ուզում Գաբալայի ռազմակայանի մասին խոսել: Ինչ վերաբերում է թուրքական ռազմակայանի տեղակայմանը, ապա Թուրքիան եւ Ադրբեջանը մեկ ազգի երկու պետություններն են, ուստի դա էլ կարելի է շրջանցել:

Սակայն ինչպե՞ս վարվել Թուրքիայում տեղակայված ՆԱՏՕ-ի եւ ԱՄՆ-ի ցամաքային, ռազմածովային եւ ռազմաօդային բազաների հետ, որոնք, այդ թվում՝ Ինջիրլիքը, սկսել են գործել դեռեւս 1954-ից: Մինչեւ 1966 թիվը այս ռազմակայանների կողքին երկրի տարածքում տեղակայվել է նաեւ 112 ռադիոլոկացիոն կայան: Թուրքական «Գենել բիլգե» կայքէջի հավաստմամբ, 1980-ական թթ. Թուրքիայում տեղակայված ամերիկյան ռազմակայանների եւ հետախուզական կառույցների թիվը հասել է ավելի քան 100-ի, իսկ Ինջիրլիքի ռազմակայանում, ինչպես «Բիանեթ» կայքէջն է նշում, 1998-ին արդեն ատոմային 90 մարտագլխիկ կար: Էլ չենք խոսում այն մասին, որ թուրք ծառայողների մուտքը, ներառյալ զորահրամանատարները, արգելված է երկրում տեղակայված ամերիկյան ռազմակայաններ:

Այսինքն, ադրբեջանցի հրոսակի տրամաբանությամբ, երբ խոսքը վերաբերում է ռուսական գեթ մեկ ռազմակայանի, ապա դա կասկածի տակ է դնում Հայաստանի անկախությունը, իսկ ամերիկյան ավելի քան 100 ռազմակայաններ, անշուշտ, միմիայն «ընդլայնում են» Թուրքիայի անկախությունը: Մնում է ենթադրել, որ տեղակայման դեպքում թուրքական ռազմակայանը կիամադրվի Գաբալայի ռուսական ռազմակայանի հետ, եւ Ադրբեջանը կդառնա աշխարհի «ամենաանկախ» պետությունը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ՀԱՆԳԻՍՏ ... ՊԱՅՔԱՐԵՏԻՆՔ

Տիլարի Քլինթոնը պատասխանել է հայաստանյան հասարակական կազմակերպություններին

ԱՄՆ պետքարտուղար Հ. Քլինթոնը երկու օր առաջ պատասխանել է Հարավային Կովկասի իրավապաշտպան ցանցի հայաստանյան կազմակերպությունների այն նամակին, որով դիմել էին նրան Երեւան կատարած այցի ժամանակ՝ հուլիսի 5-ին: Նամակում նշել էին, որ «անհրաժեշտ է անհապաղ ազատ արձակել բոլոր քաղաքական բանտարկյալներին եւ վերջ տալ այլախոհության համար հալածանքներին», իրականացնել մարտի 1-ի սպանությունների արդար հետաքննություն, բացահայտել եւ պատժել մեղավորներին, արդարացի փոխհատուցում տրամադրել զոհվածների հարազատներին», մտահոգություն էին հայտնել ոստիկանությունում, քննչական մարմիններում խոշտանգումների ու սպանության դեպքերի եւ այլ խնդիրների վերաբերյալ: «Ակնկալում ենք, որ Միացյալ Նահանգները իր հնարավորությունների շրջանակներում, գործածելով իր լծակները, ազդելով Հայաստանի իշխող վարչակազմի վրա՝ կօգնի Հայաստանի քաղաքացիական հասարակությանն ու հանրությանը լուծել վերոհիշյալ խնդիրները», ասված էր նամակում:

Պատասխան նամակում, ըստ Հայաստանի հասարակական կազմակերպությունների տրամադրած տեղեկությունների, ԱՄՆ պետքարտուղարը նշել է. «Բարեբախտաբար, Հայաստանում կա ակտիվ քաղաքացիական հասարակություն, որը պատրաստ է իր մասնակցությունը բերել այս հիմնարար խնդիրներին ուղղված հարցերում եւ եռանդագին աշխատել՝ բարելավելու քաղաքացիական միջավայրը բոլոր հայաստանցիների համար՝ անկախ քաղաքական դիրքորոշումներից, մասնագիտությունից կամ հանգամանքներից: Միացյալ Նահանգները շարունակում է հավատարիմ մնալ Հայաստանի կառավարության եւ ժողովրդի հետ աշխատելու իր հանձնառությանը՝ ուղղված տարածաշրջանում ընդհանուր նպատակների ամրապնդմանը, որոնք ներառում են խաղաղությունը, կայունությունը, ժողովրդավարությունը եւ տնտեսական բարգավաճումը: Խիստ ողջունելի է, որ դուք մեծապես կարեւորում եք այն, որ ազատ խոսքի, ժողովրդավարական արտահայտման եւ մարդու իրավունքների հարցում պետության կողմից ապահովվող պաշտպանությունը օգնում է տարածաշրջանային խաղաղության ու անվտանգության խթանմանը: Ինչքան ավելի մեծ պաշտպանվածություն է ապահովվում, այնքան ավելի կայուն ու անվտանգ է միջավայրը երկրի համար՝ ընդհանուր մարտահրավերներին դիմակայելու հարցում:

Միացյալ Նահանգները հավատացած է, որ այն նույն արժեքները, որ ծնունդ են տվել մեր պետությանը՝ որպես բաց ու ակտիվ ժողովրդավարության, ուր անսասան է հարգանքը մարդու իրավունքների, այդ թվում՝ հստակ հանձնառությունը մամուլի ազատության ապահովման հանդեպ, ազատ եւ ծաղկուն հասարակության հիմքն են կազմում եւ հույժ կարեւոր են Հայաստանի ապագայի համար: Մենք պաշտպանում ենք այդ արժեքները եւ կշարունակենք մեր ձայնը բարձրացնել ի պաշտպանություն այդ արժեքների Հայաստանում եւ ողջ աշխարհում»:

Տ. Ա.

Կրակահերթից վիրավորվել է 23-ամյա երիտասարդը

Հերթական սպանության փորձ է արձանագրվել ոստիկանության Երեւան քաղաքի վարչության հերթապահ մասում Քանաքեռ-Զեյթուն բաժնից: Օգոստոսի 25-ին, ժամը 22.15-ին Ազատության պողոտայի թիվ 2բ շենքի բակում անհայտ մակնիշի եւ պետհամարանիշի ավտոմեքենայից, անհայտ անձինք հրազենային կրակ են արձակել 1987 թ. ծնված Նարեկ Սարգսյանի ուղղությամբ՝ պատճառելով հրազենային վնասվածքներ: Տուժողին տեղափոխել են սկզբում «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն, այնտեղից էլ՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Ըստ բժշկի տեղեկանքի, տուժողն ի վիճակի չի եղել հաղորդում տալու: Զննությամբ դեպքի վայրից հայտնաբերվել է ատրճանակի 10 պարկուճ, որոնք ուղարկվել են փորձագիտական վարչություն:

«**Ազգը**» զանգահարեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք եւ փորձեց պարզել, թե ի՞նչ վնասվածքներ ունի Նարեկ Սարգսյանը եւ ի՞նչ վիրահատություն է կատարվել: Բաժանմունքի հերթապահ բժշկուհի Քրիստինա Պետրոսյանը տեղեկացրեց, որ վիրահատություն չի եղել, միայն հեռացվել է հրազենի փամփուշտը կրծքավանդակի շրջանից, եւ ներկա դրությամբ տուժածի վիճակը բավարար կայուն է ու կյանքին վտանգ չի սպառնում: Ավելացնենք, որ արձակված 10 գնդակից միայն մեկն է դիպել երիտասարդին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Ավելի շատ ներմուծում ենք, քան արտահանում

Հայրենական արտադրողների միության նախագահ **Վազգեն Սաֆարյանի** ներկայացմամբ՝ Հայաստանը նախկինում համարվում էր հզոր արդյունաբերական երկիր եւ խորհրդային 4 հանրապետություններից մեկն էր, որ ավելի շատ արտահանում էր, քան ներմուծում: Նրա ներկայացմամբ՝ Հայաստանն այժմ 4.5 անգամ ավելի շատ ներմուծում է, քան արտահանում:

«2010-ի առաջին վեցամսյակի տվյալների համաձայն՝ արտաքին առեւտրաշրջանառությունն արտահանման մասով կազմել է 442.8 մլն. դոլար, իսկ ներմուծումը՝ 1.7 մլն դոլար: Այս ցուցանիշը կրկնվում է արդեն 3-4 տարի, ինչը մտահոգիչ է», նշեց Սաֆարյանը: Նրա տվյալներով Հայաստանում 6 ամսվա ընթացքում ընդհանուր արդյունաբերական ապրանքների ընդհանուր գումարը կազմել է 370 մլն դոլար: Մեր երկիրն արտահանում է պղնձի եւ մոլիբդենի խտանյութ, կիսաթանկարժեք եւ

թանկարժեք քարերով իրեր եւ սննդամթերք: Սաֆարյանի մեկնաբանությամբ՝ ճիշտ եւ ձեռնտու կլինի արտահանել ոչ թե պատրաստանյութ, այլ՝ հումք:

Հայաստան ներմուծվող սննդամթերքի գումարն էլ կազմում է 500 մլն դոլար: Պատճառ այն է, որ ներմուծելն ավելի հեշտ է, քան տեղում արտադրություն կազմակերպելը: Սաֆարյանն առաջարկում է կառավարությանը՝ նպաստավոր պայմաններ ստեղծել, որ արտադրողը հայտնվի ավելի շահեկան դիրքերում, քան ներմուծողը: Նրա գնահատմամբ՝ ժամանակն է, որ Հայաստանը դառնա արդյունաբերական երկիր: Դրա համար պետք է զարգացնել մեքենաշինությունը, էլեկտրոնիկայի արտադրությունը, հիմնվել քիմիայի, թեթեւ արդյունաբերության, ադամանդագործության եւ ոսկերչության զարգացման միտումների վրա:

«**Ազգի**» խնդրանքով անդրադառնալով Հայաստան-Վրաստան առեւտրային հարաբերություններին՝ Սաֆարյանն ընդգծեց, որ Վրաստանը մեր ավանդական ընկերն է եւ դեռ երկար ժամանակ այդ ոլորտում իր դիրքերը չի զիջի: Վրաստանից Հայաստանը ներմուծում է պարարտանյութ, ցիտրուսային կուլտուրա, արտահանում էլեկտրաէներգիա: Կար ժամանակ, երբ Վրաստան կարտոֆիլի եւ խաղողի գլխավոր մատակարարը Հայաստանն էր, սակայն ժամանակները փոխվեցին, ու հայկական բանջարեղենն ու միրգը վրացական շուկան չի ընդունում:

«2009թ. ապրանքաշրջանառությունը հունվար-հունիս ամիսներին կազմել է 2.9 %՝ 48 մլն 967 հազար դոլար: 2010թ, այդ գումարը նվազել է՝ հասնելով 40 մլն 915 հազար դոլարի: Վրաստան արտահանվել է 20 մլն 994.000 դոլարի ապրանք, ներմուծվել 97 մլն 329.000-ի ապրանք: Սաֆարյանի ներկայացմամբ՝ Վրաստանը տարանցիկ երկիր է: Հիմնական առեւտուրն այնտեղից ենք կատարում, սակայն այդ ապրանքների մեջ փիչ տոկոս են կազմում Վրաստանում արտադրված ապրանքները: Այս տարի Հայաստան է ներմուծվել 19 մլն 922.000 դոլարի վրացական ապրանք», եզրափակեց նա:

Տ. Տ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 26/08/2010 21:32 Page 1

Արտոնավճարների ցանկը կընդլայնվի, մեքենաների ժամանակավոր ներմուծման ռեժիմը կարգելվի

Հարկային դաշտի միասնականացման եւ հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը հարկային մարմիններ կրճատելուն էր ուղղված երեկ կառավարության հաստատած հարկային փոփոխությունների փաթեթը: Ինչպես լրագրողներին հավաստիացրեց ֆինանսների նախարար **Տիգրան Դավթյանը**, այս փաթեթի տրամաբանությունը գործարարության ու մասնավորապես փոքր եւ միջին ձեռնարկատիրության համար նպաստավոր պայմանների ձեւավորումն է:

Ըստ ֆինանսների նախարարի՝ սահմանվում են միասնական ժամկետներ բոլոր հաշվետվությունների համար՝ հաշվետու ժամանակահատվածի հաջորդ ամսվա 20-ը, կրճատվում են մի շարք հաշվետվությունների հարկային մարմիններ ներկայացնելու պարբերականությունը: Մասնավորապես՝ ակցիզային հարկի հաշվետվության ամսական պարբերականությունը դառնում է եռամսյա, շահութահարկի եռամսյակային հաշվետվությունները դառնում են տարեկան: Մի շարք հաշվետվություններ էլ առաջարկվում է ընդհանրապես վերացնել: Սա, Տիգրան Դավթյանի համոզմամբ, կնվազեցնի գործարարների ծախսը հարկային մարմինների հետ եւ կխնայի նրանց ժամանակը, որ նրանք տրամադրում էին հաշվետվությունների ներկայացման համար: Բացի վերոնշյալից, ընդլայնվելու է արտոնագրային վճարների համակարգը: Ֆիզիկական անձինք եւ 6 մլն դրամից ավելի շրջանառություն եւ վարձու աշխատող չունեցող ընկերությունները նույնպես կարող են օգտվել արտոնագրային վճարների համակարգից: Այդ համակարգում ներառված ընկերություններն ու ֆիզիկական անձինք ընդհանրապես հաշվետվություն չեն ներկայացնելու:

Վերացվելու են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների եռամսյակային հաշվետվությունը, բնապահպանական եւ բնօգտագործման վճարների տարեկան հաշվետվությունը, ճանապարհային վճարի մասով ելակետային տվյալների տեղեկությունները:

Վերոնշյալ փաթեթով մաքսային օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները ներկայացրեց պետեկամուտների կոմիտեի փոխնախագահ **Արմեն Ալավերդյանը**: Նա մասնավորապես տեղեկացրեց, որ օրենքի նախագծով առաջարկվելու է Հայաստանի քաղաքացիներին ավտոմեքենաների ժամանակավոր ներմուծման ռեժիմն արգելել: Եթե քաղաքացին ավտոմեքենա է ներմուծում, ապա օրենքով 10 օրում պետք է ձեւակերպվի մեքենան, եւ կատարի վճարումները: Այլապես, երբ քաղաքացին մեքենա է ներմուծում, գրանցվում է որպես ժամանակավոր ներմուծում, այն տրամաբանությամբ, որ հետո պետք է հետ տանի, ինչը չի լինում, եւ ինչն, ըստ Արմեն Ալավերդյանի, աբսուրդ է: Օտարերկրյա քաղաքացիները, որ ժամանակավոր են գալիս Հայաստան, կարող են ժամանակավոր ներմուծում ձեւակերպել:

Պետեկամուտների փոխնախագահի ներկայացրած տվյալների համաձայն՝ անցած տարվա 7 ամիսներին 32 հազար ներմուծված մեքենա գրանցվել են ժամանակավոր ներմուծման ռեժիմով, որոնց մեծ մասը մեր քաղաքացիների մեքենաներն են: Այս տարվա 7 ամիսների ընթացքում դրանց քանակն արդեն իսկ կազմել է 44 հազար: Ակնհայտ է, որ այս մեքենաները մեր քաղաքացիները բերում են մշտական օգտագործման համար, բայց անընդհատ ձգձգում են դրանց մաքսային արժեքների վճարումը: Պետեկամուտների կոմիտեի փոխնախագահի տեղեկացմամբ՝ այդ ցանկում հիմնականում մտնում են թանկարժեք մեքենաները:

Փոստային առաքումների վրա դրվող մաքսային վճարները նույնպես կփոփոխվեն: Ներկայումս մաքսային վճարներ են դրվում, եթե ներմուծվող ապրանքի արժեքը գերազանցում է 50 հազար դրամը, իսկ այս նախագծով կառավարությունը որոշել է այդ շեմը բարձրացնել մինչեւ 150 հազար դրամի:

Արմեն Ալավերդյանը ներկայացրեց առաջարկվող մի շարք այլ փոփոխություններ: Դրանցից մեկով արձանագրվել է, որ մաքսային համակարգում հսկողությունը պետք է իրականացվի ռիսկերի կառավարման հիման վրա: Մեկ այլ փոփոխությամբ՝ մաքսային հայտարարագրերը կարող են ներկայացվել ոչ միայն թղթային, այլեւ էլեկտրոնային եղանակով: Այնուհետեւ, Հայաստանում գտնվող հյուպատոսարանների եւ այլ երկրների պատվո հյուպատոսների կողմից ծառայողական օգտագործման համար ներմուծվող ապրանքները եւս ազատվում են մաքսային վճարներից:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Քաղաքաշեջարանում խոստացան անորոշ ժամանակով դադարեցնել ենթակայանի տեղափոխումը

Իրողությունը, որ քաղաքաշեջարանը դեռեւս 2005 նոյեմբերի 25-ին էր որոշում կայացրել Կոմիտասի 5ա շենքի դիմացի ենթակայանի օտարման վերաբերյալ, որի տեղում պետք է բարձրահարկ շինություն կառուցվեր, երեկ որեւէ կերպ չփոփոխեց այդ հասցեի բնակիչներին, որոնք հույս էին փայփայում, որ իրենց բակ այցելած ու «բոլգարկով իրենց վիզը կտրողները» օրենքի ուժից չեն խոսում, եւ այդ ամենն ուղղակի չար կատակ է: Կոմիտասի 5ա, 5, 3, 7/1 շենքի բնակիչները երեկ հավաքվել էին քաղաքաշեջարանի դիմաց՝ պահանջելով հանդիպում քաղաքաշեջ Գագիկ Բեգլարյանի հետ: «Այստեղ հավաքվածները 10-14 հոգի են, բայց նրանք ներկայացնում են 4 շենքի շուրջ 400 բնակչի կարծիք: Եթե այդ բարձրահարկ 14-հարկանի շենքը կառուցվի, ապա մենք կզրկվենք լույսից: Շինարարությունը կուղեկցվի քաղաքաշինական, առողջապահական եւ բնապահպանական բոլոր նորմերի խախտումներով: Պահանջում ենք, որ քաղաքաշեջն արագ արձագանքի այս անօրինական որոշմանն ու չեղյալ համարի: Կպայքարենք մինչեւ վերջ, եթե հարկավոր է՝ նստացույց կանենք, դաշարան կդիմենք, սակայն թույլ չենք տա, որ այդ շենքը կառուցվի», ասաց Կոմիտասի 5ա բնակչուհի **Գոհար Սահակյանը**:

Շենքի բնակիչները նախօրեին ստորագրահավաք էին կազմակերպել ու նամակներ ուղարկել ՀՀ նախագահին, քաղաքաշեջին, առողջապահության, քաղաքաշինության եւ բնապահպանության նախարարներին, մարդու իրավունքի պաշտպանի գրասենյակին, սակայն որեւէ գերատեսչությունից կոմիտասցիների խնդրին չէին արձագանքել՝ ցուցաբերելով անտարբերություն սեփական աշխատանքի եւ պաշտոնի նկատմամբ: Միայն նախագահի աշխատակազմից էր ծանուցում եկել՝ տեղեկացնելով, որ բնակիչներն իրենց հուզող հարցերի պատասխանը փնտրեն քաղաքաշեջարանում:

«Եթե ենթակայանը տեղափոխեն, 14-հարկանի շինություն կառուցեն, ապա տարածքի սեյսմակայունությունը կխախտվի: Զարմանում եմ՝ ինչպե՞ս են նման թույլատվությունը տվել: Մի՞թե փորձաքննություն չեն անցկացրել: Անգամ ոչ մասնագետը կընդունի մեր մտահոգություններն ու կարգելի այնտեղ որեւէ կառույցի հիմնում: Որոշումը կայացվել է 2005թ, սակայն բնակիչներն այդ մասին չեն իմացել: Քաղաքը լցված է նման էլիտար շենքերով, բայց բնակչություն չկա: Ինչի՞ համար են կառուցում այդ շենքերը: Մեր դիմացի փողոցում շենք կա, որ վաղուց է կառուցվել. սակայն մարդիկ չեն ապրում», իր մտահոգություններն է արտահայտում **Սուսաննա Թերզյանը**:

87-ամյա **Ռաֆայել Երզնկյանն** էլ, որ հայրենական պատերազմի վետերան է եւ երկրորդ կարգի հաշմանդամ, ձեռնափայտի օգնությամբ է եկել քաղաքաշեջարան՝ անձամբ խնդրելու, որ իրենց լույսից ու օդից չզրկեն: «Ամենաթողություն է, առանց որեւէ մեկին հարցնելու, որեւէ մեկի կարծիքն իմանալու անում են այն, ինչ ուզում են: Պատուհանների առաջ շինություն են կառուցում, մի՞թե սա թույլատրելի է: Եթե այդ շինությունը կառուցվի, շենքի բնակիչները կզրկվեն լույսից ու օդից: Ինչո՞ւ, ինչի՞ համար, ո՞վ է այս ամենի հետեւում կանգնած՝ կրկին անհասկանալի է», հարցնում է Ռաֆայել պապիկը:

Գոհար Սահակյանն էլ պատմում է, որ առանց այդ էլ ենթակայանի պատճառով բնակիչները շատ են տուժել: Նրա հարեւաններից շատերն են տառապում քաղցկեղով, շատերն էլ նույն հիվանդությունից մահացել են: Թեպետ հաստատված չէ, սակայն շենքի բնակիչները համոզված են՝ հիվանդության պատճառը ենթակայանն է:

Բնակիչների հայտարարությանը՝ «Մինչեւ մեր ձայնը չլսեն, ոչ մի տեղ չենք գնա», արձագանքեց Երեւան քաղաքի գլխավոր ճարտարապետ **Սամվել Դանիելյանը**: Շուրջ 45 րոպե տեւած զրույցի ընթացքում բնակիչները ներկայացրին իրենց մտահոգությունները: Գլխավոր ճարտարապետը երաշխավորեց, որ շինարարություն չի իրականացվի, եւ այդում ծառահատումներ չեն լինի, մինչեւ հարցերը չքննարկեն բնակիչների հետ: Դանիելյանը խոստացավ նաեւ, որ անհրաժեշտության դեպքում նոր չափագրումներ ու փորձաքննություն կանցկացնեն: Բնակիչները հուսով են, որ ճարտարապետի այս խոստումը չի դառնա «գլխների տակ փափուկ բարձր դնելու» ավանդույթ: «Չենք սահմանափակվելու եւ շարունակելու ենք պայքարել», վստահեցրին նրանք:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

«Օրանժը» Հայաստանում ներդնում է BlackBerry ծառայությունը

Երեկ «Օրանժ Արմենիա» եւ Research In Motion ընկերությունները դրեցին Հայաստանում BlackBerry ծառայության մեկնարկը: BlackBerry լուծումը սմարթֆոնների, ծրագրային ապահովումների եւ ծառայությունների համատեղություն է, որը հնարավորություն է ընձեռում հեշտությամբ օգտվելու էլեկտրոնային փոստից, հեռախոսից, օրացույցից, վեբ մուլտիմեդիայից եւ բիզնեսում ու առօրյա կյանքում անհրաժեշտ այլ ծրագրերից: Այս ծառայությամբ «Օրանժի» հաճախորդները կարող են վայելել ազատությունը եւ աշխատանքի արդյունավետությունը՝ BlackBerry-ի սմարթֆոնների օգնությամբ եւ կապի մեջ լինել ու մշտապես մուտք ունենալ դեպի տեղեկատվություն՝ անգամ լինելով շարժման մեջ: «Օրանժ»-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյուքուան, ներկայացնելով նոր ծառայությունը, նշեց. «Այս լուծումը մեր հաճախորդներին կտա արդյունավետ աշխատանքի նոր հնարավորություններ ինչպես գործնական, այնպես էլ անձնական կյանքում: Սա մեր հերթական քայլն է՝ առաջարկելու այնպիսի շարժական տեխնոլոգիաներ, որոնք կհարստացնեն եւ կփոխեն նրանց կյանքը»:**

Ներկայացվեց BlackBerry Bold 9700 սմարթֆոնը, որն առանձնանում է գերազանց աշխատանքով, ֆունկցոնալ հնարավորություններով՝ համատեղել 3G HSDPA ցանցերի հետ, ունի 256 ՄԲ հիշողություն, ներկառուցված GPS եւ Wi-Fi 3,2ՄԲ տեսախցիկ եւ բարձր հստակության էկրան: Սմարթֆոնի արտաքին տեսքը առանձնանում է ինտեգրված սենսորային հարթակով, գերզգայուն, տարբերակված ստեղնաշարով, կոկիկ եւ նրբագեղ տեսքով: Սմարթֆոնը կարելի է ձեռք բերել «Օրանժ»-ի 17 խանութներից 230 հազար դրամով:

Տ. Ա.



Այս տարի Հայաստանում ավելի շատ երեխա է ծնվել, քան նախորդ տարի

Այս տարվա հունվար-հուլիս ամիսներին հանրապետությունում արդեն ծնվել է 24792 երեխա, որից 11742-ը ծնվել են Երեւանում: Առողջապահության նախարարության մոր եւ մանկան բաժնի մանկաբարձ-գինեկոլոգ Լիլյա Գարյունովան «Արմենպրեսին» տեղեկացրել է, որ այս տարվա հունվար-հուլիս ամիսներին ծնվել են ավելի շատ երեխաներ, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: 2009-ի առաջին 7 ամիսների համեմատությամբ՝ 2010-ին հանրապետությունում ծնունդների թիվն ավելացել է 1049-ով:

Հիշեցնենք, որ առողջապահության նախարարությունը 2008-ի հուլիսի 1-ից ներդրել է ծննդօգնության հավաստագրերի համակարգը, որի գործունեության հետ կապված՝ պարբերաբար մոնիտորինգ է անցկացվում ինչպես Երեւանի, այնպես էլ մարզերի ծննդատներում:

Ի. Պ.

Ժամկետային ավանդների գծով Յունիբանկը դարձյալ առաջին տեղում է

2010 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով Յունիբանկը պահպանել է առաջատարի իր տեղը ժամկետային ավանդների շուկայում: Բանկի ժամկետային ավանդների ծավալը կազմել է 63.1 մլրդ դրամ, ավելանալով հաշվետու տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 37.5 տոկոսով:

AZG NEW PDF.qxd 26/08/2010 21:32 Page 1

Ռուսաստանի «տօրինած» աշխարհը

Երկու դար եւ շուրջ երկու տասնամյակ, ավելի կոնկրետ՝ 216 տարի. 2044-ին, երբ կլրանա Հայաստանում ռուսական ռազմաբազայի տեղակայման նոր ժամկետը, ռուսական զինվորները հենց այսքան «ծառայողական փորձ» կունենան հայկական հողում: Այս օրերին, երբ հայաստանյան հասարակությունը՝ քաղաքագետ-փորձագետ-վերլուծաբանների «առաջնորդությամբ», ակտիվորեն քննարկում է Գյումրու ռուսական բազայի տեղակայման ժամկետի ավելացումը, ֆէրն են հիշում, որ ռուս զինվորը Հայաստանում է արդեն 182 տարի՝ սկսած 1828-ին Ռուսական կայսրության եւ Պարսկաստանի միջեւ կնքված Թուրքմենչայի պայմանագրից. այդ ժամանակներից ի վեր, բացառությամբ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո որոշ ժամանակահատվածի, ռուսական դրոշը գրեթե երբեք չի լքել հայկական հողը, ինչպես վստահեցնում են ռուսական որոշ լրատվամիջոցներից ռուս գործիչները՝ «ապահովելով Հայաստանի ազատությունն ու անվտանգությունը»:

Այնպես որ, պատմությունը ավանդույթներ է ծնում, ավանդույթները՝ սովորույթներ, վերջիններս էլ սովորաբար դառնում են բնավորություն: Հետեւաբար զարմանալու եւ «միամիտ ձեւանալու» կարիք ամենեւին չկա՝ ռուսները վաղուց արդեն մեր երկրում են՝ եւ ոչ միայն ռազմական առումով, իսկ Հայաստանի երրորդ հանրապետությունը, մտնելով «մոսկովյան առանձնասենյակներում» առաջացած ՀԱՊԿ-ի կազմի մեջ, ավելի, քան մինչեւ 2044-ը, իր անվտանգությունը կապել է հենց Մոսկվայի հետ, համենայն դեպս այդպես են խոսում մերօրյա փաստերը, այդպես է հիշեցնում պատմությունը:

Օրեր առաջ նախագահներ Սարգսյանն ու Մեդվեդեւը, Գյումրիում խոսելով Կովկասի պատմության մասին, թերեւս նաեւ այս ամենը նկատի ունեին. «Հայաստանը մշտապես եղել է եւ կա Ռուսաստանի ամենահավատարիմ ու վստահելի գործընկերներից մեկը, Մոսկվայի կարեւոր դաշնակիցը՝ ԱՊՀ եւ ՀԱՊԿ ուղղություններով: Ավելին, Հայաստանն այն հազվագյուտ արտասահմանյան երկրներից է, որտեղ պահպանվել են ռուսական ռազմական բազաները», գրում են ռուսական որոշ լրատվամիջոցներ: Այժմ «տեսնենք», թե ի՞նչ բազա ունի Ռուսաստանը մեր երկրում՝ ի՞նչ եւ ինչպիսի՞ զինամթերքով, ի՞նչ եւ ո՞ւմ հրամաններն է նա կատարում, քանի՞ ռուս զինվոր կա այսօր հայկական հողում եւ այլն: Ծանոթանանք նաեւ ռուսական բազաների առանձնահատկություններին մեր տարածաշրջանի այլ երկրներում: Տեղեկությունները ռուսական «ՌԻԱ Նովոստի»-ի հրապարակումից են:

Հայաստան

Մեր երկրում ռուսական ռազմական ներկայությունը աղահովված է 102-րդ ռազմաբազայով, որի կազմում են երեք մոտոհրաձգային գունդ (մեկը՝ Երեւանում, երկուսը՝ Գյումրիում), 992-րդ հրետանային գունդը, 988-րդ զենիթահրթիռային գունդը (երկուսն էլ Գյումրիում), 116-րդ առանձին տանկային գումարտակը, ինչպես նաեւ 772-րդ առանձին հետախուզական գումարտակը, որի կազմում են ռազմական աղահովագրական զորամիավորումներ: 102-րդ բազան զինված է շուրջ 100 տանկերով, շուրջ 300 զրահամեքենաներով, հրթիռային համակարգերով եւ տարբեր տիպերի զենիթահրթիռային համակարգերով: Ռուսական ռազմաբազայում այսօրվա դրությամբ ծառայում են շուրջ 4000 զինվորականներ: Բազան ենթարկվում է Անդրկովկասի ընդհանուր ռուսական ռազմական միավորման անմիջական հրամանատարությանը: Այն խնդիրները, որոնք լուծում են ռուսական զորամիավորումները, Հայաստանում մի քանիսն են, ընդ որում՝ Հայաստանը թերեւս միակ «ռուսական բազայով երկիրն է», որտեղ ռուսական զորքը նաեւ «մտահոգված է ՀՀ անվտանգությամբ»:

Այսպես. ռուսական բազայի հայաստանյան խնդիրներից մեկն, անշուշտ, նախ եւ առաջ Ռուսաստանի համար «հարավային ճակատի» հուսալի փակումն է, ինչպես նաեւ ԱՊՀ շրջանակներում հակահրթիռային պաշտպանության իրականացումը: Այս հանգամանքն առավել արդիականացավ 2008-ի «Ռուսաստան-Սահակաշվիլի» պատերազմի ընթացքում եւ դրանից հետո: Ունենալով հարավում՝ Հայաստանում հզոր հենասյուն, Ռուսաստանը կարող է ուժեղ հակահարված տալ, եթե Սահակաշվիլին «հանկարծ որոշի...»: Որպես հայկական շահ ներկայացնենք հանգամանքը, որ ռուսական ռազմաբազայով, վստահաբար, կայունանում է տարածաշրջանը՝ հատկապես Հայաստան-Ադրբեջան զույգի համար. Ադրբեջանը, մեղմ ասած, քիչ հավանական է, որ պատերազմ սկսի ռուսական բազայով Հայաստանի դեմ, մանավանդ որ «Մոսկվան լրջորեն է վերաբերվում իր դաշնակցային պարտավորություններին»: Ռուսաստանն ունի այդ պարտավորությունները նաեւ ՀԱՊԿ-ի շրջանակներում:

Երրորդ խնդիր որպես, որ լուծում է ռուսական ռազմաբազան Հայաստանում, կարելի է ներկայացնել բազմակողմ ռազմական հակամարտությունների հնարավորությունը մեր անհանգիստ եւ «բազմաբեւեռ» տարածաշրջանում: Անշուշտ, այս վերջինը քիչ հավանական է, սակայն մեծ քաղաքականության մեջ «քիչ հավանական» չի լինում: Ռուսական հայաստանյան ռազմաբազայի խնդիրներից որպես վերջինը ներկայացնենք հակահաբեկչական պայքարը. համաձայնեք՝ որեւէ փաստաթուղթ, որը կարող ենք տեսնել բազայի գործունեության մասին, անպայմանորեն կներառի այս խնդիրը:

Այս հիմնական խնդիրներից զատ, ռուսական ռազմաբազան ունի նաեւ մի շարք կարեւոր նշանակություններ: Օրինակ՝ լինելով Հայաստան-Ռուսաստան կապող հզոր օղակ, ռուսական բազան հնարավորություն է տալիս մեր շատ քաղաքացիների տեղավորվելու աշխատանքի զորքի սպասարկման ոլորտում: Բացի ռուսական բազայից, Հայաստանում ծառայություն են անցկացնում նաեւ ռուս սահմանապահները, որոնց շարքերում քիչ չեն նաեւ մեր քաղաքացիները. այսպիսով ռուսական ռազմաբազան Հայաստանում մեծապես խթանում է երկու երկրների, երկու ժողովուրդների կապերի խորացումը:

Նշենք նաեւ, որ Գյումրու ռազմաբազան Ռուսաստանի համար յուրահատուկ է այն առումով, որ Մոսկվան տեղակայման համար վարձավճար չի տալիս, ավելին՝ Հայաստանը պարտավորված է հոգալ Հայաստանում գտնվող ռուսական զորքի բոլոր կումունալ ծախսերը: Հիշեցնենք նաեւ, որ 2005-ին Հայաստանը որոշակիորեն մեծացրեց ռուսական ռազմաբազայի տեղակայման համար տրամադրված հողատարածքները եւ գույքը:

Ադրբեջան

Գաբալայի շրջանի Զարագան գյուղի մերձակայքում տեղակայված ռադիոլոկացիոն կայանը համարվում է ամենամեծը աշխարհում: Կայանի շինարարությունը սկսվել է դեռեւս սովետական ժամանակներից՝ 1970-ին, իսկ 1985-ին հանձնվել է շահագործման: Կայանն այժմ «Դարյալ» տիպի ռադիոլոկացիոն կայան է եւ կառուցվել է որպես ԽՍՀՄ հակահրթիռային պաշտպանության կարեւոր տարրերից մեկը: Այն նախատեսված է որպես միջմայրցամաքային բալիստիկ հրթիռներից պաշտպանության միջոց, ինչպես նաեւ կարող է արձակել հետո, երբ լատվիական Սկրունդում Մոսկվան կորցրեց իր ռադիոլոկացիոն երկու կենտրոնները, կառուցման աշխատանքները վերսկսվել են: 2002-ին Բարանովիչի կայանն ընդգրկվել է տիեզերական զորքերի կազմում, իսկ 2003-ին նաեւ կազմել է Ռուսաստանի «Հրթիռային հարձակման մասին ահազանգելու» համակարգի մասը: Բելառուսական կայանն ունակ է հրթիռ արձակելու տեղակայման վայրից 5 հազար կիլոմետր տարածքով եւ կարող է տիեզերքում նկատել անգամ մի քանի միլիմետրանոց գնդիկ:

Բարանովիչի կայանը Ռուսաստանը վարձակալում է 25 տարով, սկսած 1995-ից՝ հիմնվելով նույն թվականին կնքված երկկողմ համաձայնագրի վրա: Տարեկան վարձակալման գումարն է 7-9 մլն դոլար: Հավելենք, որ բելառուսական կայանը անմիջականորեն ղեկավարվում է Ռուսաստանի նախագահի «սեւ արկղիկից»: Բարանովիչի կայանի շնորհիվ Ռուսաստանը վերահսկում է ՆԱՏՕ-ի սուզանավերը Ատլանտյան օվկիանոսում եւ Նորվեգական ծովում: Բազայի տարածքը ավելի քան 200 հա է: Կայանում հաշվառված են 2000 մասնագետներ, որոնց 15 տոկոսը բելառուսներ են: Բարանովիչի կայանն ընդգրկված է նաեւ ԱՊՀ միասնական հակահրթիռային պաշտպանության համակարգում:

Բելառուսում Ռուսաստանի ռազմական ներկայությունն աղահովվում է նաեւ «Վիլեյկա»՝ ռազմածովային կայի հանգույցը, որը տեղակայված է Մինսկի մարզի համանուն քաղաքից 10 կմ հեռավորության վրա: Հանգույցը բացվել է 1964-ին. այն աղահովվում է կապ ռազմավարական ատոմային սուզանավերի հետ, որոնք գտնվում են ծովի ընդերքում: 1995-ի հունվարի վեցից միայն, համաձայն երկկողմ համաձայնագրի, Մոսկվան վարձակալում է «Վիլեյկան»՝ նույն հիմունքներով, ինչ Բարանովիչի կայանը: «Վիլեյկա»-ից անմիջական ազդանշան է տրվում ՌԴ ռազմածովային ուժերի կենտրոն աշխարհի բոլոր օվկիանոսներում գտնվող սուզանավերի վերաբերյալ: Այս հանգույցը նույնպես անմիջականորեն կառավարվում է ՌԴ նախագահի «սեւ արկղիկից»: Ծառայող սպաների թիվն է 350, բացի այդ՝ նաեւ կամավորներ Բելառուսից: Հանգույցն զբաղեցնում է 650 հա տարածք:

ՀԱՊԿ դաշնակիցներ: Բելառուս

Նախ տեղեկացնենք, որ միակ երկիրը ՀԱՊԿ-ի անդամներից, որտեղ ռուսական ռազմական բազա չկա, Ուզբեկստանն է: Իսկ Բելառուսում, ինչպես եւ Ադրբեջանում, Մոսկվան ունի ռադիոլոկացիոն կայան՝ «Վոլգա» տիպի, որը տեղակայված է Բարանովիչի շրջանի Գանցեւիչ գյուղում: Կայանի շինարարությունը սկսվել էր դեռեւս 1981-ին, սակայն ընդհատվել է եւ միայն այն բանից հետո, երբ Մոսկվան կորցրեց ռադիոլոկացիոն երկու կենտրոնները, կառուցման աշխատանքները վերսկսվել են: 2002-ին Բարանովիչի կայանն ընդգրկվել է տիեզերական զորքերի կազմում, իսկ 2003-ին նաեւ կազմել է Ռուսաստանի «Հրթիռային հարձակման մասին ահազանգելու» համակարգի մասը: Բելառուսական կայանն ունակ է հրթիռ արձակելու տեղակայման վայրից 5 հազար կիլոմետր տարածքով եւ կարող է տիեզերքում նկատել անգամ մի քանի միլիմետրանոց գնդիկ:

Բարանովիչի կայանը Ռուսաստանը վարձակալում է 25 տարով, սկսած 1995-ից՝ հիմնվելով նույն թվականին կնքված երկկողմ համաձայնագրի վրա: Տարեկան վարձակալման գումարն է 7-9 մլն դոլար: Հավելենք, որ բելառուսական կայանը անմիջականորեն ղեկավարվում է Ռուսաստանի նախագահի «սեւ արկղիկից»: Բարանովիչի կայանի շնորհիվ Ռուսաստանը վերահսկում է ՆԱՏՕ-ի սուզանավերը Ատլանտյան օվկիանոսում եւ Նորվեգական ծովում: Բազայի տարածքը ավելի քան 200 հա է: Կայանում հաշվառված են 2000 մասնագետներ, որոնց 15 տոկոսը բելառուսներ են: Բարանովիչի կայանն ընդգրկված է նաեւ ԱՊՀ միասնական հակահրթիռային պաշտպանության համակարգում:

Բելառուսում Ռուսաստանի ռազմական ներկայությունն աղահովվում է նաեւ «Վիլեյկա»՝ ռազմածովային կայի հանգույցը, որը տեղակայված է Մինսկի մարզի համանուն քաղաքից 10 կմ հեռավորության վրա: Հանգույցը բացվել է 1964-ին. այն աղահովվում է կապ ռազմավարական ատոմային սուզանավերի հետ, որոնք գտնվում են ծովի ընդերքում: 1995-ի հունվարի վեցից միայն, համաձայն երկկողմ համաձայնագրի, Մոսկվան վարձակալում է «Վիլեյկան»՝ նույն հիմունքներով, ինչ Բարանովիչի կայանը: «Վիլեյկա»-ից անմիջական ազդանշան է տրվում ՌԴ ռազմածովային ուժերի կենտրոն աշխարհի բոլոր օվկիանոսներում գտնվող սուզանավերի վերաբերյալ: Այս հանգույցը նույնպես անմիջականորեն կառավարվում է ՌԴ նախագահի «սեւ արկղիկից»: Ծառայող սպաների թիվն է 350, բացի այդ՝ նաեւ կամավորներ Բելառուսից: Հանգույցն զբաղեցնում է 650 հա տարածք:

Ղազախստան

Այս երկրում հիմնականում պահպանվել են այն ռազմաբազաներն ու կայանները, որոնք կային ԽՍՀՄ օրոք եւ որոնք շարունակում են կարեւոր նշանակություն ունենալ Ռուսաստանի անվտանգության համար: Հիմնվելով երկկողմ մի շարք համաձայնագրերի վրա, Մոսկվան՝ վարձավճարային հիմունքներով, տնօրինում է Ղազախստանում 7 խոշոր ռազմական օբյեկտներ, ընդհանուր՝ ավելի քան 11 մլն հա տարածություն: Հետեւաբար զարմանալու եւ «միամիտ ձեւանալու» կարիք ամենեւին չկա՝ ռուսները վաղուց արդեն մեր երկրում են՝ եւ ոչ միայն ռազմական առումով, իսկ Հայաստանի երրորդ հանրապետությունը, մտնելով «մոսկովյան առանձնասենյակներում» առաջացած ՀԱՊԿ-ի կազմի մեջ, ավելի, քան մինչեւ 2044-ը, իր անվտանգությունը կապել է հենց Մոսկվայի հետ, համենայն դեպս այդպես են խոսում մերօրյա փաստերը, այդպես է հիշեցնում պատմությունը:

Օրեր առաջ նախագահներ Սարգսյանն ու Մեդվեդեւը, Գյումրիում խոսելով Կովկասի պատմության մասին, թերեւս նաեւ այս ամենը նկատի ունեին. «Հայաստանը մշտապես եղել է եւ կա Ռուսաստանի ամենահավատարիմ ու վստահելի գործընկերներից մեկը, Մոսկվայի կարեւոր դաշնակիցը՝ ԱՊՀ եւ ՀԱՊԿ ուղղություններով: Ավելին, Հայաստանն այն հազվագյուտ արտասահմանյան երկրներից է, որտեղ պահպանվել են ռուսական ռազմական բազաները», գրում են ռուսական որոշ լրատվամիջոցներ: Այժմ «տեսնենք», թե ի՞նչ բազա ունի Ռուսաստանը մեր երկրում՝ ի՞նչ եւ ինչպիսի՞ զինամթերքով, ի՞նչ եւ ո՞ւմ հրամաններն է նա կատարում, քանի՞ ռուս զինվոր կա այսօր հայկական հողում եւ այլն: Ծանոթանանք նաեւ ռուսական բազաների առանձնահատկություններին մեր տարածաշրջանի այլ երկրներում: Տեղեկությունները ռուսական «ՌԻԱ Նովոստի»-ի հրապարակումից են:

Հայաստան

Մեր երկրում ռուսական ռազմական ներկայությունը աղահովված է 102-րդ ռազմաբազայով, որի կազմում են երեք մոտոհրաձգային գունդ (մեկը՝ Երեւանում, երկուսը՝ Գյումրիում), 992-րդ հրետանային գունդը, 988-րդ զենիթահրթիռային գունդը (երկուսն էլ Գյումրիում), 116-րդ առանձին տանկային գումարտակը, ինչպես նաեւ 772-րդ առանձին հետախուզական գումարտակը, որի կազմում են ռազմական աղահովագրական զորամիավորումներ: 102-րդ բազան զինված է շուրջ 100 տանկերով, շուրջ 300 զրահամեքենաներով, հրթիռային համակարգերով եւ տարբեր տիպերի զենիթահրթիռային համակարգերով: Ռուսական ռազմաբազայում այսօրվա դրությամբ ծառայում են շուրջ 4000 զինվորականներ: Բազան ենթարկվում է Անդրկովկասի ընդհանուր ռուսական ռազմական միավորման անմիջական հրամանատարությանը: Այն խնդիրները, որոնք լուծում են ռուսական զորամիավորումները, Հայաստանում մի քանիսն են, ընդ որում՝ Հայաստանը թերեւս միակ «ռուսական բազայով երկիրն է», որտեղ ռուսական զորքը նաեւ «մտահոգված է ՀՀ անվտանգությամբ»:

Այսպես. ռուսական բազայի հայաստանյան խնդիրներից մեկն, անշուշտ, նախ եւ առաջ Ռուսաստանի համար «հարավային ճակատի» հուսալի փակումն է, ինչպես նաեւ ԱՊՀ շրջանակներում հակահրթիռային պաշտպանության իրականացումը: Այս հանգամանքն առավել արդիականացավ 2008-ի «Ռուսաստան-Սահակաշվիլի» պատերազմի ընթացքում եւ դրանից հետո: Ունենալով հարավում՝ Հայաստանում հզոր հենասյուն, Ռուսաստանը կարող է ուժեղ հակահարված տալ, եթե Սահակաշվիլին «հանկարծ որոշի...»: Որպես հայկական շահ ներկայացնենք հանգամանքը, որ ռուսական ռազմաբազայով, վստահաբար, կայունանում է տարածաշրջանը՝ հատկապես Հայաստան-Ադրբեջան զույգի համար. Ադրբեջանը, մեղմ ասած, քիչ հավանական է, որ պատերազմ սկսի ռուսական բազայով Հայաստանի դեմ, մանավանդ որ «Մոսկվան լրջորեն է վերաբերվում իր դաշնակցային պարտավորություններին»: Ռուսաստանն ունի այդ պարտավորությունները նաեւ ՀԱՊԿ-ի շրջանակներում:

Երրորդ խնդիր որպես, որ լուծում է ռուսական ռազմաբազան Հայաստանում, կարելի է ներկայացնել բազմակողմ ռազմական հակամարտությունների հնարավորությունը մեր անհանգիստ եւ «բազմաբեւեռ» տարածաշրջանում: Անշուշտ, այս վերջինը քիչ հավանական է, սակայն մեծ քաղաքականության մեջ «քիչ հավանական» չի լինում: Ռուսական հայաստանյան ռազմաբազայի խնդիրներից որպես վերջինը ներկայացնենք հակահաբեկչական պայքարը. համաձայնեք՝ որեւէ փաստաթուղթ, որը կարող ենք տեսնել բազայի գործունեության մասին, անպայմանորեն կներառի այս խնդիրը:

Այս հիմնական խնդիրներից զատ, ռուսական ռազմաբազան ունի նաեւ մի շարք կարեւոր նշանակություններ: Օրինակ՝ լինելով Հայաստան-Ռուսաստան կապող հզոր օղակ, ռուսական բազան հնարավորություն է տալիս մեր շատ քաղաքացիների տեղավորվելու աշխատանքի զորքի սպասարկման ոլորտում: Բացի ռուսական բազայից, Հայաստանում ծառայություն են անցկացնում նաեւ ռուս սահմանապահները, որոնց շարքերում քիչ չեն նաեւ մեր քաղաքացիները. այսպիսով ռուսական ռազմաբազան Հայաստանում մեծապես խթանում է երկու երկրների, երկու ժողովուրդների կապերի խորացումը:

Նշենք նաեւ, որ Գյումրու ռազմաբազան Ռուսաստանի համար յուրահատուկ է այն առումով, որ Մոսկվան տեղակայման համար վարձավճար չի տալիս, ավելին՝ Հայաստանը պարտավորված է հոգալ Հայաստանում գտնվող ռուսական զորքի բոլոր կումունալ ծախսերը: Հիշեցնենք նաեւ, որ 2005-ին Հայաստանը որոշակիորեն մեծացրեց ռուսական ռազմաբազայի տեղակայման համար տրամադրված հողատարածքները եւ գույքը:

Ադրբեջան

Գաբալայի շրջանի Զարագան գյուղի մերձակայքում տեղակայված ռադիոլոկացիոն կայանը համարվում է ամենամեծը աշխարհում: Կայանի շինարարությունը սկսվել է դեռեւս սովետական ժամանակներից՝ 1970-ին, իսկ 1985-ին հանձնվել է շահագործման: Կայանն այժմ «Դարյալ» տիպի ռադիոլոկացիոն կայան է եւ կառուցվել է որպես ԽՍՀՄ հակահրթիռային պաշտպանության կարեւոր տարրերից մեկը: Այն նախատեսված է որպես միջմայրցամաքային բալիստիկ հրթիռներից պաշտպանության միջոց, ինչպես նաեւ կարող է արձակել հրթիռներ, ինչպես նաեւ կարող է արձակել գլխիկներ:

Գաբալայի կայանը նաեւ նախատեսված է «տիեզերական տարածությունից եկող վտանգներից ապահովագրվելու համար»: Կայանն ունակ է վերահսկելու 6 հազար կիլոմետր՝ իր տեղակայման տարածքից: Օրինակ՝ Գաբալայի «վերահսկման տակ են» Իրանը, Թուրքիան, Չինաստանը, Հնդկաստանը, Իրաքը եւ անգամ Ավստրալիան, ինչպես նաեւ Ատլանտյան եւ Հնդկական օվկիանոսների կողքերը: Ընդ որում՝ Գաբալայից ռուսական օդային տարածքի վերահսկումն անհնար է: Կայանն ընդունակ է միանգամից խոցելու 20 «բարդ» եւ 100 «միանշանակ» կրակակետեր: Գաբալայի կայանը իրանա-իրաքյան պատերազմի մասնակցության համար արժանացել է ԽՍՀՄ պետական պարգեւի:

Համաձայն ռուս-ադրբեջանական 2002-ին կնքած համաձայնագրի՝ Գաբալայի կայանը սպացել է «ինֆորմացիոն-վերլուծական կենտրոն»-ի կարգավիճակ, որը պատկանում է Ադրբեջանի Հանրապետությանը: Իսկ Մոսկվան կայանը տնօրինում է միայն վարձակալության հիմունքներով՝ տասը տարով (սկսած 2002-ից) եւ ամեն տարվա համար մուծելով 7 մլն դոլար: 2007-ին ՌԴ այն ժամանակվա նախագահ Պուտինը դիմեց իր ամերիկացի գործընկերոջը՝ Բուշ կրտսերին, միասնաբար օգտագործելու Գաբալայի կայանը: Այժմ, սակայն, կայանը մտնում է «Հրթիռային հարձակման մասին ահազանգելու» ռուսական համակարգի մեջ:

Ղրղզստան

Այս երկրում Ռուսաստանն ունի վարձակալած 5 խոշոր ռազմական: Ամենակարեւորը, նաեւ հա-

AZG NEW PDF.qxd 26/08/2010 21:32 Page 1

յերիս համար, 999-րդ «Կենs» ավիաբազան է, որը գտնվում է ՌԴ հակահրթիռային պաշտպանության ուժերի կազմում եւ տեղակայված է Բիշքեկից 20 կմ հեռավորության վրա՝ Կանտե Ջույսկ շրջանում: Ստորաբաժանումը նախատեսված է որպես ռուսական, իսկ հիմնականում ՀԱՊԿ երկրների օդային խմբավորումների կայանատեղի՝ «երբ վերջիններս կլուծեն ռազմական խնդիրներ ՀԱԿՊ անդամ որեւէ երկրին վտանգ սպառնալու պարագայում»: Ավիաբազայում տեղակայված են «ՍՈՒ-25» ռազմական ինքնաթիռներ, ուսումնառազմական L-39 ինքնաթիռներ եւ քաղաքացիական ավիացիայի ուղղաթիռներ:

Ռուսաստանը պարբերաբար մեծացնում է զինվորների թվաքանակն այս բազայում: 338-րդ կապի հանգույցը (ՌԴ ռազմածովային ուժերի) աղահովում է կապը՝ ՌԴ վերոհիշյալ ուժերի գլխավոր շտաբի եւ այն սուզանավերի ու նավերի միջեւ, որոնք գտնվում են մարսական հերթապահության մեջ՝ Խաղաղ եւ Հնդկական օվկիանոսներում: Հանգույցն իրականացնում է նաեւ ռադիոտեխնիկական հետախուզություն՝ ՌԴ ռազմածովային ուժերի գլխավոր շտաբի հեռաբրքությունների շրջանակում: Ղողզսանում են տեղակայված նաեւ 954-րդ փորձարարական բազան, որը ամբողջովին, առանց վարձակալման հիմունքների, պատկանում է ՌԴ-ին, ՌԴ ՊՆ սեյսմիկ ծառայության 1-ին եւ 17-րդ ավտոմատ սեյսմիկ կայանները՝ տեղակայված Իսսիկ-Կուլ եւ Ջալալ-Աբադ շրջաններում: Այս կայանները նախատեսված են ատոմային զենքի փորձարկումների համար: Համաձայն Ղողզսանի պետական որոշ հայտարարությունների՝ «այս կայանները լուրջ սեյսմիկ վտանգ են ներկայացնում ոչ միայն երկրի, այլ ամբողջ տարածաշրջանի համար»:

Առաջիկայում Մոսկվան նախաձեռնում է մեծացնել իր զորաքանակը Ղողզսանում՝ հիմնականում մեծացնելով զինվորների եւ զինամթերքի քանակը «Կենտ»-ում:

Տաջիկստան

Այս երկրում տեղակայված ռուսական ռազմական բազայի հիմքը 201-րդ դիվիզիան է, որը համարվում է ՌԴ ԶՈՒ-ի ամենամարտունակ ստորաբաժանումներից մեկը: Վերոհիշյալ դիվիզիան Տաջիկստանում է դեռեւս 1943-ից, արդեն 2004-ին, երբ ՌԴ նախկին նախագահ Պուտինն այցելեց Դուշանբե, նախագահ Ռահմոնի հետ համաձայնեցրեց ռուսական բազայի տեղակայման որոշ խնդիրներ: Այնուհետեւ 201-րդ ռուսական դիվիզիան ստանձնեց պարտականություններ՝ աղահովել տաջիկ-աֆղանական սահմանի անվտանգությունը, ինչպես նաեւ հումանիտար օգնության փոխանցումը Աֆղանստան: Այսօր ռուսական դիվիզիան պարտավորված է կրկին աղահովել տաջիկ-աֆղանական սահմանը՝ «օգնելով տաջիկ սահմանապահներին եւ աղահովելով Տաջիկստանի անվտանգությունը»: Դիվիզիայում ծառայում են շուրջ 7000 զինվորականներ, ներառում է մոտոհրաձգային գունդ, հրետանային գունդ, զենիթահրթիռային գունդ, ինչպես նաեւ 7 մարտական ուղղաթիռներից կազմված ռազմաօդային ուժերի ստորաբաժանում: 201-րդ դիվիզիան համարվում է ամենախոշորը, որ ունի Ռուսաստանը երկրի սահմաններից դուրս:

Ղողզսանում ՌԴ-ն ունի նաեւ տիեզերական տարածքի հետազոտման «Նուրեկ» օպտիկա-էլեկտրոնային համալիրը: Այն տեղակայված է Նուրեկ քաղաքի մերձակայքում՝ Սանգլոկի լեռներում, ծովի մակերեւույթից 2200 մետր բարձրության վրա: Կայանը նախատեսված է հայտնաբերելու տիեզերքում օբյեկտներ՝ 40 հազար կիլոմետր հեռավորությունից: Կայանի շինարարությունը սկսվել է 1979-ից, սակայն Տաջիկստանի ներքաղաքական իրավիճակի սրման հետեւանքով 1992-95թթ. կայանը չի գործել: 1992-ին Մոսկվան ու Դուշանբեն վիճում էին կայանի սեփականատեր որոշելիս, երկկողմ համաձայնագրով կայանի հողային տարածքը հանձնվեց ՌԴ-ի տնօրինմանը, իսկ 2004-ին հաստատվեց ակտ, համաձայն որի՝ «ՌԴ-ին որպես սեփականություն է հանձնվում «Նուրեկ» կայանն իր ամբողջ գույքով»: Այսօր «Նուրեկը» իրականացնում է «ռուսական տիեզերական տարածքի» հետազոտություն:

Ուկրաինա

Համաձայն 1997-ին ստորագրած ռուս-ուկրաինական համաձայնագրի, Ուկրաինան համաձայնեց Սեւաստոպոլում ռուսական նավատորմի տեղակայմանը: Համաձայնագրի ժամկետը 20 տարի էր: Օրեր առաջ, ինչպես հայ-ռուսական, այնպես էլ ռուս-ուկրաինական համաստասխան համաձայնագրի ժամկետները երկարաձգվեցին: ՌԴ-ն իրավունք ունի Սեւաստոպոլում տեղակայելու ավելի քան 30 ռազմական նավ, տնօրինելու հիմնական ռազմամթերքը, Թեոդոսիայում գտնվող փորձարարական կետրոնը, երկու օդանավակայան (փոքր) եւ ավելի քան 1000 օբյեկտ Ղրիմում: Ռուս զինվորների թվաքանակը Ուկրաինայում չի կարող անցնել 25 հազարը, հրետանային համակարգը չի կարող անցնել 24-ը, զրահամեքենաների թիվը՝ 132-ը, ինքնաթիռներինը՝ 22-ը:

Աբխազիա եւ Հարավային Օսիա

2009-ի սեպտեմբերին Մոսկվան Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հետ կնքեց համաձայնագրեր՝ «49 տարով եւ եւս 5 տարի ավտոմատ երկարաձգման իրավունքով»: Համաձայն փաստաթղթերի՝ ՌԴ-ն իրավունք է ստանում տրամադրելու միջոցներ եւ կառուցելու ռուսական ռազմական բազաներ երկու երկրներում, ինչպես նաեւ ստեղծելու ուժեր՝ «ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական իրավիճակներում»: 2010-ի փետրվարի մեկից ՌԴ ՊՆ 4-րդ ռազմաբազան ամբողջովին տեղակայվեց Աբխազիայի եւ Հարավային Օսիայի տարածքներում՝ Ցխինվալում եւ Ջավեում:

Սիրիա

Սիրիական Տարտուս նավահանգստում է գտնվում ռուսական միակ ռազմաբազան հեռավոր արտասահմանում: Այն նաեւ միակն է միջերկրածովյան ավազանում: Տարտուսում տեղակայված են ռուսական ռազմական նավեր, իսկ տեղակայման համաձայնագիրը ստորագրվել է Սիրիայի հետ դեռեւս 1971-ին:

Տարտուսի ռազմաբազան հիմնականում ստեղծված է Միջերկրական ծովում ռուսական նավերի անվտանգության համար: 1991-ից, սակայն, ռուսական նավերը հազվադեպ են դուրս եկել Միջերկրական ծով: Այսօր Տարտուսի բազայում տեղակայված են «ՊՄ-61Մ» ռազմանավեր, նավավերանորոգման կետրոն, որը բարեկարգվում է ամեն 6 ամիսը մեկ անգամ, զինվորական կացարաններ եւ այլ՝ առավելապես քաղաքացիական օբյեկտներ: Տարտուսում են գտնվում 50 ռուս ծովայիններ: ՌԴ ՊՆ-ն ոչ մեկ անգամ է բարձրաձայնել՝ «Տարտուսի բազան պետք է վերանորոգել եւ նորացնել»:

Հիշեցնենք՝ վերոհիշյալ տեղեկությունները հաղորդում ենք «ՌԻԱ Նովոստի»՝ ռուսական առաջատար գործակալություններից մեկի տվյալներով, որտեղ ընդգծված է. «Մեր աղբյուրները բաց են»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

WikiLeaks. ԱՄՆ-ը ահաբեկչություն «արտահանող» երկիր է

WikiLeaks կայքէջը հրապարակել է ԿՀՎ արխիվներից առնված փաստաթուղթ, որտեղ քննարկվում են ԱՄՆ-ից ահաբեկչության «արտահանման» հետեւանքները: Ֆրանսերես գործակալությունը հաղորդում է, որ ԿՀՎ-ն բավական զուսպ է արձագանքել գաղտնի փաստաթղթի հրապարակմանը:

Երեքշաբաթ զեկուցագրի հեղինակը ԿՀՎ ստորաբաժանումներից մեկն է, որը պատասխանատու է այլընտրական սցենարների մշակման համար: Փաստաթղթում մասնավորապես նշվում է, որ մահմեդական եւ այլ գրոհայինները վաղուց ԱՄՆ-ը որպես բազա են օգտագործում ուրիշ երկրներում ահաբեկչությունների նախապատրաստման համար: Ըստ որում ԱՄՆ իշխանությունները բավարար ուշադրություն չեն դարձնում այդ սպառնալիքին, քանի որ մտահոգված են առաջին հերթին ԱՄՆ-ի դեմ ուղղված ահաբեկչական գործունեությամբ:

«Եթե ԱՄՆ-ին դիտարկենք որպես ահաբեկչություն արտահանող երկիր, ապա արտասահմանյան գործընկերները կարող են դժկամությամբ համագործակցել արտադատական արարողակարգերում, այդ թվում՝ երրորդ երկրների տարածքում կասկածյալների ձերբալակման, տեղափոխման եւ հարցաքննության գործում», ասվում է 2010-ի փետրվարի 2-ին կազմված ԿՀՎ փաստաթղթում:

Դրա հրապարակումը մեկնաբանելով՝ ԿՀՎ ներկայացուցիչ Ջորջ Լիթլը պարզաբանել է, որ նման վերլուծական գրառումների նպատակն է «դրդել խորհրդածության եւ ներկայացնել այլ տեսակետներ»:

Ավելի վաղ՝ հուլիսի 23-ին WikiLeaks-ը հրապարակել էր Աֆղանստանում ամերիկացիների գործողությունների հետ կապված 77 հազար գաղտնի փաստաթուղթ: Անցկացված քննության ընթացքում Պենտագոնի նյութերի արտահոսքի համար մեղադրանք է ներկայացվել շտաբային Բրեդ Մենինինգին:

WikiLeaks-ը ունի «աֆղանական գործի» հետ կապված եւս 15 հազար փաստաթուղթ: Ենթադրվում է, որ դրանք կհրապարակվեն մինչեւ օգոստոսի վերջը, փաստաթղթերից հանելով այն անձանց անունները, ում կյանքը կարող է վտանգի ենթարկվել հրապարակման հետեւանքով:

Թեհրանը Մոսկվային առաջարկում է միջուկային վառելիքի համատեղ արտադրություն

Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավար Ալի Ակբար Սալեհին երեկ հայտարարեց, որ Թեհրանը Մոսկվային առաջարկել է ընկերություն հիմնել միջուկային վառելիքի համատեղ արտադրության նպատակով:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը մեջբերում է Սալեհիի այն խոսքերը, որ առաջարկությամբ նախատեսվում է ստեղծել ռուս-իրանական կոնսորցիում, որը երկու երկրների միջեւ կբաշխի միջուկային վառելիքի արտադրության աշխատանքները:

Սալեհին ասել է, որ ռուսական կողմը ուսումնասիրում է իրանցիների առաջարկությունը: Նա ավելացրել է, որ Իրանը սեփական տարածքում գտնվող ուրանի հանքավայրերի հետախուզման աշխատանքներ է սկսել: Մինչեւ վերջերս իրանցիներն օգտագործում էին 1970-ականներին ՀԱՀ-ից գնած ուրանը: Իրանի կենտրոնական մասում գործում է ուրանի մեկ հանք, որտեղից արդյունահանվում է տարեկան 132 տոննա հումք: Երկրի տարածքում ուրանի ընդհանուր պաշարները գնահատվում են 7,72 մլն տոննա:

Փարանջան արգելած ֆրանսիացի նախարարը կամուսնանա մահմեդական կնոջ հետ



Ֆրանսիայի ներգաղթի, ինտեգրման եւ ազգային ինքնության նախարար Էրիկ Բեսսոնը հայտարարել է, որ մտադիր է ամուսնանալ Յասմին Թորջմանի հետ:

52-ամյա նախարարը հասարակական վայրերում փարանջան կրելն արգելող օրինագծի հեղինակն է: 23-ամյա մահմեդական կնոջ հետ նրա միությունը դարձել է ֆրանսիական լրատվամիջոցների գլխավոր թեմաներից մեկը: Երեք զավակների հայր Բեսսոնը անցյալ տարի լքեց 49-ամյա կնոջը՝ Սիլվիա Բրյունելին, եւ համատեղ կյանք սկսեց Փարիզի արվեստի դպրոցի 23-ամյա ուսանողուհու հետ: Բրյունելը գիրք հրատարակեց ամուսնու դավաճանության վերաբերյալ, բայց դա արդյունք չտվեց:

Բեսսոնը երկար ժամանակ թաքցնում էր ընկերուհու անունը: Այժմ հայտնի է, որ դա Յասմին Թորջմանն է, որը Թունիսի առաջին նախագահ Հաբիբ Բուրգիբայի երկրորդ կնոջ թոռնուհին է: News de stars կայքի տվյալներով՝ ժամանակին Բուրգիբան որդեգրել էր իր երկրորդ կնոջ՝ Վասսիլայի դստերը՝ Յասմինի մորը:

Առաջիկա ամուսնության կապակցությամբ Էրիկ Բեսսոնը հանդես է եկել հատուկ հայտարարությամբ, նշելով, որ ինքը մտադիր չէ իսլամ ընդունել, թեեւ «շատ հարգում է» այդ կրոնը: Պսակադրության արարողությունը կրելու է աշխարհիկ բնույթ, քանի որ նախարարը թանկ է գնահատում Ֆրանսիայի Հանրապետության աշխարհիկ բնույթը:

Արարողությունը տեղի կունենա սեպտեմբերի 18-ին: Ներկա կլինեն միայն մերձավորները, այդ թվում՝ նախագահ Նիկոլա Սարկոզին:

Վերջին շաբաթներին Բեսսոնը շատ է քննադատվում Ֆրանսիայում ապօրինաբար գտնվող գնչուներից շատերի արտաքսման կապակցությամբ:

Չորացվում է Մոնբլանի սառցադաշտի տակ գտնվող լիճը

Ֆրանսիական Ալպերում սկսվել է Մոնբլանի սառցադաշտի ներսում գոյացած լճի չորացման գործողություն: 65 հազար խոր. մետր ծավալ ունեցող հսկայական ջրամբարը հեղեղման սպառնալիք է Սեն Ժերվե հովտի համար: Ֆրանսերեսը նշում է, որ ներկա պահին վտանգված են առնվազն երեք հազար տեղաբնակների կյանքը եւ ունեցվածքը:

1982-ին նույն հովտում լեռներից գահավիժած ջրերի հոսքը 175 մարդու մահվան պատճառ էր դարձել: Ներկայումս իշխանությունները բնակիչներին նախապատրաստում են տարհանմանը: Իսկ ճարտարագետները 50 մետր խորությամբ հորատում կիրականացնեն լճի ջուրն արտամղելու համար: Գործողությունը կարժենա 2 մլն դոլար:

Աշխատանքները կատարվում են ավելի քան երեք հազար մետր բարձրության վրա: Աշխատողների փոխադրամիջոցն ուղղաթիռն է:

AZG NEW PDF.qxd 26/08/2010 21:33 Page 1

Հայաստանը մասնակցելու է Վենետիկի 54-րդ Բիենալեին

2011 թվականին Հայաստանը կմասնակցի Վենետիկի 54-րդ Բիենալեին: Վենետիկյան Բիենալեն ժամանակակից արվեստի ստուգաստես է, որին Հայաստանը մասնակցում է 1995 թվականից: 2011-ին այն տեղի է ունենալու հունիսի 4-ից նոյեմբերի 27-ը եւ կրելու է «Տիեզերքները տիեզերքում» խորագիրը: 54-րդ Բիենալեի հայկական տաղավարի կոմիսար Վիկտոր Մնացականյանը երեկ «Նովոստի» մամուլի կենտրոնում տեղեկացրեց, որ վենետիկյան Բիենալեն հիմնվել է 1895 թվականին: Սկզբում դրան մասնակցել են ընդամենը 5-12 երկրներ, իսկ հիմա այդ թիվը հասել է 30-ի: Վ. Մնացականյանի փոխանցմամբ՝ Բիենալեյի հայկական տաղավարի հիմնական համադրողը (կուրատորը) դեռեւս չի ընտրել այն մասնակիցներին, որոնք հանդես կգան 54-րդ Բիենալեյում: Այս ստուգատեսին մասնակցող յուրաքանչյուր երկիր բացի մասնակիցներից ունենում է նաեւ համադրող ու կոմիսար, որոնք պատասխանատու են ազգային նախագծի չափանիշների համար:

54-րդ Բիենալեյի հայկական տաղավարի համադրողներն են մշակույթի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սոնա Հարությունյանը, լրագրող Արմինե Անտիկյանը, արվեստի քննադատ Նազարեթ Կարոյանը, արվեստաբաններ Վարդան Ազատյանն ու Ռուբեն Արեւշատյանը: Նազարեթ Կարոյանի խոսքով՝ Հայաստանը տաղավար կունենա Մխիթարյան միաբանության Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում ու կփորձի տաղավար ձեռք բերել Արսենալեում, որը եղել է հին զինամթերքի պահոց ու նավերի գործարան:

Ինչ վերաբերում է ներկայացվող աշխատանքների բովանդակությանը, Վարդան Ազատյանի խոսքով՝ կոնցեպտը դեռ մշակվում է. «Բովանդակության առումով կոնկրետ պատասխաններ մեզնից մի՛ սպասեք»:

«Ազգի» հարցին, թե ֆինանսական ի՞նչ միջոցներով է Հայաստանը մասնակցելու 54-րդ Բիենալեյին, Վիկտոր Մնացականյանը պատասխանեց, որ իրենց հիմնականում աջակցում են բարերարները. սփյուռքի բարերարները տրամադրում են 500 դոլարից մինչեւ 10 հազար դոլար: «Նաեւ համագործակցում ենք մշակույթի նախարարության հետ: Նախանցյալ տարի նախարարությունը կոնկրետ ֆինանսական աջակցություն ցուցաբերել է», ավելացրեց Վ. Մնացականյանը:

Ասուլիսի վերջում բանախոսները նշեցին, որ Հայաստանում արդեն 40 տարուց ավելի է գոյություն ունի ժամանակակից արվեստ: Հասարակության լայն շերտերը, սակայն, չեն հաղորդակցվում այդ արվեստի հետ: Մարդկանց մի մասին չի հետաքրքրում ժամանակակից արվեստը, իսկ մյուս մասն էլ չգիտի ինչպե՞ս ու որտե՞ղ տեսնի ժամանակակից արվեստի աշխատանքները: Ըստ Նազարեթ Կարոյանի՝ արվեստասեր հանրության ոչ իրազեկ լինելու մեջ մեղքի բաժին ունեն նաեւ լրատվամիջոցները: Թե ի՞նչ մակարդակի վրա է ժամանակակից արվեստը, դա այլ հարց է: Ժամանակակից արվեստին լրատվամիջոցները, հատկապես հեռուստաընկերությունները անդրադառնում են ոչ բավարար չափով:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Նվիրված գեղանկարիչ Վլադիմիր Աբանյանին

Սեպտեմբերի 26-ին Գլենդելի Պասիֆիկ հանրային կենտրոնում տեղի կունենա հոբելյանական միջոցառում՝ նվիրված գեղանկարիչ Վլադիմիր Աբանյանի ծննդյան 70 եւ ստեղծագործական 50 ամյակներին: Միջոցառման կազմակերպիչներն են Աբանյան արվեստի կենտրոնն ու Հոբելյանական հանձնաժողովը: Այդ օրը ցուցադրվելու են վարպետի աշխատանքները, նաեւ «Ոսկե Սարդոսայն Նկարչի մասին» ֆիլմը, որը նկարահանել է Հայաստանի «Նոր արվեստ» ստուդիան: Ֆիլմը նկարչի ստեղծագործությունների ու գեղարվեստական նվաճումների մասին է: Հոբելյանական միջոցառման ժամանակ լինելու է նաեւ «Վլադիմիր Աբանյան. կյանքը եւ արվեստը» գրքի շնորհանդես- գինեձոնը:

Ի. Պ.

Վահե Պետրոսյան-«Թուջե Մառախուղ»

Մառախուղ եւ այն էլ՝ թուջե... Լինո՞ւմ է այդպես: Լինում է: Կա: Պատահե՛լ է: Փռվել է մեր աչքերի, մեր մտքի, մեր հոգու, մեր խղճի, մեր գիտակցության, նաեւ մեր անգիտակցության դեմ-հանդիման եւ... սթափության է հրավիրում:

«Ինչ ունեի կիսելու խղճիս, այգուս առավոտ կանուխի հետ,
տվեցի Ձեզ»:

Վահե Արտավազդի Պետրոսյանն է, որ մերօրյա ետթողության թանձր մշուշը ոչ միայն փարատեց իր «Թուջե մառախուղ»-ով, այլեւ դարձավ մեր դարագլուխ բանաստեղծության ամրակուռ շղթայի անմակտելի օղակը: Նոր ու ամուր օղակը:

Վաղո՞ւց, շատ վաղուց սպիտակ թղթին պահ չէր տվել հայ բան ու բառի այսքան ազնիվ տեսակ...

Ծառն ընդերքի ձայնն է մղում
Բանաստեղծի մատներով վեր,
եւ արյունն է հղկում անհնազանդ մտքի...

Բանաստեղծություն, որ իր յուրօրինակ կշռույթում պարփակում է մեր ազատության տարիների ժամանակագրությունն ու խռովքը միաժամանակ: Բանաստեղծություն, որ շիտակ է ու առնացի, պարզ է ու խոր, զուսպ է ու շռայլ... Բանաստեղծություն, որին սպասել ենք, սպասում էինք...

Ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած...

Բարեբախտաբար:

Սեւակյան ճշմարտությունը թող միշտ շարունակի իր անվրեպ հաստատումը...

Վահե Պետրոսյանի «Թուջե մառախուղ» բանաստեղծությունների հատորը բաղկացած է երկու մեծ բաժիններից, որոնք իրենց հերթին ունեն համապատասխանաբար վեց եւ երեք ենթաբաժին:

Այլազան են բանաստեղծի շոշափած նյութերը: Գրի էջերը մի տեսակ անսահմանն են գրկել իրենց արտնյալ տարածքում եւ հյուրընկալել են ավելի քան 170 երթված: Տանեւյոթ տասնյակը անցնող բան ու բառ, միտք ու ապրում, պատկեր ու մտորում եւ բոլորը հոգու եւ բանականության բովով անցած, բոլորը թրծված կյանքի հնոցում:

...Ճանապարհը դառնացել է
Անցած ուղուս փորձից...

Կար, գոյություն ունեցել է, բայց եւ վաղուց ի վեր մեզանում բացակա էր խաղաղասիրական բանաստեղծության հատու տեսակը: Չարենցն է այդ տեսակի կրողը, մունետիկն ու ռահվիրան, մեր բոբ ու հրակարմիր պոետը Նաիրյան... Չարենցից հետո, այդ ուղղության կրողը երկար, շատ երկար բացակայեց, բայց այսօր նա իր մեծ նախորդի ոսնահետքերի վրա կանգնած, հաստատուն շարունակում է նրա ակոսած ուղին...

Փակիր աչքերս-
հոգնաբեկության հանձարեղ կսկիծ,
իմ երգն այլեւս վառարանի մոտ
դանթող հուշերի արձագանքը չէ,
այն դուրս է ինձնից,
այն մտորումն է մաշված դրոշի,
գալարափողի,
որ իր բզկտված նվագարանում
կրում է ձայնը
պայթեցված գանգի,
պայթեցված բքի,
որի միջուկը հուշարձանն է իմ:

Ե՞րբ է բանաստեղծի ճանապարհը հարթ կամ դյուրին եղել: Ո՞ր հեռու մոտիկ ժամանակներում: Տալիս եմ հարց, որի պատասխանը մեկ ու միակն է՝ չի՛ այդպիսի ժամանակներ: Բանաստեղծը նախ գուցե ակամա, բայց հիշ անց գիտակցորեն է քայլում այդ ճանապարհով, որ նախաստեղծ է ու նախանշված: Այդ ճանապարհը զուրկ է մարդկային տեսակին ներհատուկ հանդուրժողականությունից, այն շատ է զգայուն եւ կեղծ տեսակ չի ընդունում, դուրս է մղում անարժանին, մեր գրավոր խոսքի դարագլուխ ուղին վկա:

Մութի տանիքից իջնում է հոդին
խոնավ համբույրը արթնացող լույսի,
մեկը թակում է դուռս,



մորս տաք ժպիտն է թառել բալենու ճյուղին:

Վահեի միտքը սուր է, լեզուն հայատրոփ, պատկերները նրբանախշ խաչքարի նման հատակ են ու բազմաշերտ: Հմուտ խաչքարագործ է, գուցե նաեւ այդտե՞ղ է պետք փնտրել իր բազմահմուտ ԲԱՆի ամրության գաղտնիքը:

Հոգնեցի Աստծո կերտած քարերը
Տեսքի բերելուց.
Հաղորդեցի փայլ ոսկեսաղերի,
ծավալագծեր իրիկնահացի
եւ առավոտի ճնճղի ուրտի ձայն
եւ նշանների մեջ ապրող անցյալ
մի ժամանակի իրերի ոգին.
Հոգնեցի Աստծո կերտած քարերը
ի մի բերելով:

Ցավն է մղիչ ուժը բանաստեղծական խոսքի: Ցավ, որ երբեմն ցայտում, երբեմն ժայթքում է թուջե բառերի, տողերի արանքից ու ծեծում բանականությանդ դուռը...

Տեր, գթա քեզ, մի՛ գնա
փորձության իմ ճամփեքով,
չես դիմանա, կլքես
Երկիրը իմ՝ Ձերմաղոթքս...

Որքան հատու, նույնքան քնքուշ է բանաստեղծի խոսքը.

Լռությունն է աշնան ոսկե շաղիկ հագել...

Կամ՝

Իրիկնաձայնն է նվաղում: Շեմից
փշատի բույրն է անհանգիստ թակում
դարերի ներկից չորացած լույսի
վերջին փեղկերը...

Մեր բանաստեղծության լուսե տաճարը դռները բացել եւ ողջունում է իր նոր քուրմին... Քուրմը խոսքն աղոթքի վերածելու ձիրքն ունի.

Տեր, տուր այգուս սիրո հաստունություն.
Վարդի բքի ցողից հունցած տառիս
Ծավալումներ անանձնական խոհի:
Ես ծարավ եմ խաղաղ մի տքնության,
ուր գույն ու գիծ վերածում են բառը
Նավի Լեռան, սառցե հրե զարդի:
Տեր, տուր այն, ինչ խնայեցիր որդուդ.
ես էլ նրա ու քո մտերիմն եմ,
բախտակիցը փոշիացող ուխտի.
Կարոտել եմ հոգուս, որ հավատում,
որոնում է մի բուռ հողի արեւ,
հանուն սիրո անխախտ ուխտի,
Տեր, տուր այգուս սիրո հաստունություն:

«Թուջե մառախուղ»-ը Վահեի առաջնեկը չէ, բայց նոր խոսք է մեր քերթության անդաստանում, խոսք, որ սպասում է իր հոգեղբորը՝ ընթերցողին, խոսք, որ կարող է դառնալ մեր սեղանին հաց հանապազորդ:

Թուջե մառախուղից այս կողմ եւ... այն կողմ՝ ողջո՞ւյն Վահե որդի Արտավազդի Պետրոսյանին:

ԱՆԻ ԹՈՐԱՆՅԱՆ
Երեւան
Օգոստոս 2010

«Խուլիգան Դիկը», նույն ինքը՝ Ռիչարդ Բաքալյան

Հայազգի դերասանը, որի մասին քչերը գիտեն

«Կյանքում շատ տարօրինակ շրջադարձային փուլեր կարող են տեղի ունենալ», գրում է Ֆրենկ Նահիկյանը «Արմինյն միրոր սփոքթեյթր» շաբաթաթերթի հուլիսի 31-ի համարում, եւ որպես օրինակ բերում է ամերիկահայ դերասան Ռիչարդ (Դիկ) Բաքալյանի օրինակը:

1930-ականներին Ռիչարդի հայրը Ամերիկա ներգաղթելով եւ Ուոթերթաունում հաստատվելով, սկսում է ճաշարաններում եւ ռեստորաններում խոհարարի ժամանակավոր աշխատանքներ կատարելով վաստակել իր ապրուստը: Մահանում է 1939-ին, երբ Դիկը դեռեւս 8 տարեկան է լինում: Ընտանիքի մտքովն անգամ չի անցնում, որ 25 տարի անց, 1964-ին Դիկը հնարավորություն կարող է ունենալ ճաշելու Մոնակոյի արքայազն Ռեյնյեի եւ նրա կնոջ՝ գեղեցկուհի Գրեյս Քելլիի (նախկինում՝ դերասանուհի) հետ՝ իրենց զբոսանավի վրա, որպես հռչակավոր դերասան եւ երգիչ Ֆրենկ Սինատրայի հյուրը:



Բաքալյանը Սեզար Ռոմերոյի հետ

«Ֆոն Ռայանի ճեղքնթացը» ֆիլմի նկարահանումների ժամանակ «20-րդ դար ֆոքս» կինոստուդիան մի զբոսանավ է վարձում Սինատրայի համար, որ «ազատ ժամերին զբաղվի»: Սինատրան էլ իր մոտիկ խաղընկերներին (ներառյալ Բաքալյանին) հավաքում է եւ հասնելով Մոնակո, նավամատույցում պատահաբար հանդիպում արքայազնին ու նրա կնոջը, որոնք էլ անմիջապես հրավիրում են հարգարժան դերասանի՝ Սինատրայի ամբողջ «պատվիրակությանը» մի քանի օր անցկացնել միասին:

«Անհավատալի էր, բայց իրական: Ուղղակի ապշեցուցիչ էր: Ինձ շատ բախտավոր էի զգում», խոստովանել է Ռիչարդը վերջերս Նահիկյանի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ: Նա նաեւ խիստ դրական հիշողություններով խոսել է ինչպես Սինատրայի, այնպես էլ Դին Մարտինի, Սեմի Դեյվիս կրտսերի, Ջեկ Նիկոլսոնի, Էնտոնի Քուինի, Սեզար Ռոմեյի եւ հոլիվուդյան այլ դերասանների մասին:

Նահիկյանի հարցին, թե Թինզլթաուն քաղաքի բարոյական մթնոլորտն ինչպիսի՞ն էր, Ռիչարդը պատասխանել է. «Նման է որեւէ այլ փոքր քաղաքի մթնոլորտին: Մարդիկ ընդհանրապես խուսափում են որոշ արարքներից, որովհետեւ գիտեն, որ շուտով ամբողջ քաղաքի բամբասանքի առարկան կդառնան»:

Բաքալյանը գանգստերի կամ խուլիգանի դերերով շատ գեղարվեստական եւ հեռուստատեսային ֆիլմերում է հանդես եկել: Նրա առաջին դերը եղել է իրավազանց պատանու կերպարը մարմնավորելը, որը նա գերազանց է կատարել, շնորհիվ նաեւ իր համապատասխան արտաքինին: Զբաղվել է ըմբշամարտով, որոշ ժամանակ, եւ 15 դոլար վաստակել յուրաքանչյուր խաղի համար: Բայց քիթը որոշ չափով վնասվել է: Նրա հիշարժան ֆիլմերից է Ռոման Պոլանսկու «Չայնաթաունը», որտեղ Ջեկ Նիկոլսոնն է խաղում:



«Պոլանսկին դինամիկ անձնավորություն էր, գիտեր ում ընտրել որոշակի դերի համար», հիշում է Դիկը:

«Այդ ֆիլմո՞վ ծանոթացաք Նիկոլսոնի հետ» Նահիկյանի հարցին, Բաքալյանը պատասխանել է. «Ոչ, դրանից առաջ էի ծանոթացել նրա հետ: Մենք միասին ենք մեծացել, գնդակով խաղացել, զվարճացել: Շատ լավ անձնավորություն է»:

Բաքալյանի կարիերայի մյուս կարեւոր շրջանը Բոբի Դարենի հետ հեռուստատեսային «Կարմինը եւ էնդին» սերիալի նկարահանումներն են եղել՝ Նյու Յորքում երկու ընկերների արկածների մասին: «Սերիալը հաջողության արժանացավ եւ մենք շատ նամակներ ստացանք: Այնուհետեւ ինձ հրավիրեցին նկարահանվելու այլ փոքր դերերում», հիշում է Դիկը:

Հաջորդ մեծ «գործը» Ուոլթ Դիսնեյի 1969-ին նկարահանած «Դժվար է թռչուն լինելը» կարճամետրաժ մուլտֆիլմում ներածականը պատմող թռչունի դերն էր, որը 1970-ին Օսկարի արժանացավ: Դրանում խոսվում էր մարդկությանը թռչունների բերած նոպաստի մասին: Դիկի ձայնը շատ համոզիչ պետք է հնչած լիներ այնտեղ, քանի որ դրանից հետո նա դեր է ստանձնում Դիսնեյի «Աղվեսը եւ որսկան շունը» լիամետրաժ մուլտֆիլմում, Միքի Ռունիի, Քըրս Ռասելի, Պըոլ Բեյլիի եւ Սենդի Դունկանի կողքին:

«Պատահականությունները ճակատագրական կարող են լինել երբեմն», եզրակացնում է հոդվածագիր Ֆրենկ Նահիկյանը, մեզ ներկայացնելով Ռիչարդ Բաքալյանի հետաքրքիր կերպարը:

Պատրաստեց
Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 26/08/2010 21:34 Page 1

Հայ ըմբիշները նախապատրաստվում են տարվա գլխավոր ստուգատեսին

Սեպտեմբերի 6-13-ը Մոսկվայում կանցկացվի ըմբշամարտի աշխարհի հերթական առաջնությունը, որին լրջորեն են նախապատրաստվում նաեւ Հայաստանի ըմբիշները: Նախ մրցապարեզ դուրս կգան հունահռոմեական ոճի ըմբիշները, ապա մրցագորգը կտրամադրվի ազատոճայիններին: Հայաստանի երկու հավաքականներն էլ Մոսկվայում հանդես կգան իրենց մարտական կազմերով քաջային բոլոր 7 կարգերում:

Վերջին տարիներին հայկական ըմբշամարտում որոշակի դրական տեղաշարժեր են տեղի ունեցել: Մեր ըմբիշները բավական հաջող մրցելույթներ են ունեցել միջազգային խոշոր մրցաշարերում, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում: Հավաքականի կազմն ուժեղացնելու նպատակով Հայաստանի դրոշի ներքո են հավաքագրվել ռուսաստանցի մի քանի ըմբիշներ:

Առավել հաջող մրցելույթներ են ունենում հունահռոմեական ոճի ըմբիշները: Ազգային հավաքականը տարիներ շարունակ գլխավորում է օլիմպիական չեմպիոն Լեւոն Ջուլֆալակյանը, որի բեղմնավոր աշխատանքի արդյունքներն առկա են: Տարեսկզբին էլ մեր հավաքականը նրա գլխավորությամբ հաջող ելույթ բռնեց փետրվարին Երեւանում կայացած հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի գավաթի խաղարկությունում՝ զբաղեցնելով մրցանակային 3-րդ տեղը: Հաջորդ կարեւորագույն ստուգատեսն ապրիլին Բաքվում կայացած Եվրոպայի առաջնությունն էր, որին մեր ըմբիշները չմասնակցեցին:



ՖՈՏՈԼՈՒՐ

Իհարկե, տարվա գլխավոր ստուգատեսը Մոսկվայում կայանալիք աշխարհի առաջնությունն է, որին մեր երկու հավաքականներն էլ ամենայն լրջությամբ են նախապատրաստվում: Այս օրերին հավաքականների թեկնածուները Երեւանում ուսումնամարզական հավաք են անցկացնում: Մինչեւ Մոսկվա մեկնելը հավաք կանցկացվի Բելառուսի Ստայկի քաղաքում: Հունահռոմեական ոճի հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանն արդեն հրապարակել է կազմը: Մոսկվայում Հայաստանի մարզական պատիվը կպաշտպանեն օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, աշխարհի փոխչեմպիոն, Եվրոպայի չեմպիոն Ռոման Ամոյանը (55 կգ), Եվրոպայի չեմպիոն Վահան Ջուհարյանը (60 կգ), Արման Ադիկյանը (66 կգ), Եվրոպայի չեմպիոն Արսեն Ջուլֆալակյանը (74 կգ), Դենիս Ֆորովը (84 կգ), պատանիների Եվրոպայի փոխչեմպիոն Սարգիս Տոնոյանը (96 կգ) եւ մեր ամենափորձառու ըմբիշ, օլիմպիական խաղերի բրոնզե մրցանակակիր, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր, Եվրոպայի բազմակի չեմպիոն Յուրի Պատրիկեեւը (գերծանր քաշ):

Սովորաբար Լեւոն Ջուլֆալակյանը պատասխանատու մրցաշարերից առաջ զերծ է մնում զանազան գուշակություններից, նշելով միայն, որ կձգտեն հնարավորինս հաջող հանդես գալ:

Ինչ վերաբերում է ազատ ոճի ըմբիշներին, ապա հավաքականի գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդասյանը դեռեւս վերջնական որոշում չի կայացրել: Օրերս նա կիրապարակի հավաքականի վերջնական կազմը:

Ֆրանսիական մղձավանջ «Զենիթի» համար

Հայտնի դարձան ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի վերջին 5 մասնակիցները: Սանկտ Պետերբուրգի «Զենիթին» չհաջողվեց հաղթահարել հերթական փուլը, այլապես Ռուսաստանը չեմպիոնների լիգայի պատմության մեջ առաջին անգամ խմբային մրցաշարում ներկայացված կլիներ 3 թիմով:

«Զենիթն» իտալացի մարզիչ Լուչանո Սպալետիի գլխավորությամբ 23 խաղ անընդմեջ անպարտելի էր: Եվ ահա 24-րդ խաղում, «Օսերի» հետ մրցավեճում տպավորիչ այդ շարքն ընդհատվեց, իսկ «Զենիթը» չկարողացավ ընդգրկվել 32 ընտրյալների շարքը: Ֆրանսիացիներն արդեն 9-րդ րոպեին բացեցին հաշիվը՝ վերականգնելով 2 հանդիպումներում ընդհանուր հավասարակշռությունը: Աչքի ընկավ Անգբարը: 53-րդ րոպեին Ելենը 2-րդ գոլը խփեց: «Զենիթին» ընդամենը մեկ գնդակ էր հարկավոր խմբային մրցաշարի ուղեգիր նվաճելու համար: Սակայն թիմը հետագայում մնաց 9 հոգով, երբ դաշտից հեռացվեցին դարպասապահ Մալոֆեեւն ու Գուբոչանը: Նման պայմաններում գոլ խփելն անչափ դժվար էր:

Խաղից հետո մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Ժան Ֆեռնանդես («Օսեր») **- Մենք հիանալի խաղ ցուցադրեցինք պատշտպանությունում, թեեւ մրցաշրջանի մեկնարկում հենց այդ գծում լավ չէինք դրսեւորում մեզ: Սա առաջին դեպքն է այս մրցաշրջանում, որ «Զենիթը» 2 գոլ է բաց թողնում: Հարձակման գծում մեր ֆուտբոլիստները կարող էին ավելի լավ գործել, հատկապես վերջին 20 րոպեներին: Մենք հաղթեցինք ուժեղ մրցակցի: Գիտեի, որ դժվար է լինելու, սակայն մշտապես կրկնում էի, որ «Զենիթին» հաղթելն անհնար չէր: Եվ մենք կատարեցինք մեր առջեւ դրված խնդիրը:**

Լուչանո Սպալետի («Զենիթ») **-«Օսերը» ֆիզիկապես շատ հզոր թիմ է: Որոշ դրվագներում մենք կոպիտ սխալներ թույլ տվեցինք ու մրցակիցն օգտվելով դրանցից, 2 անգամ հաջող իրացրեց սանդարտ դրությունները: 0-2 հաշվի ժամանակ հեռացվեց մեր դարպասապահը, հետո Գուբոչանը եւ ամեն ինչ ավելի բարդացավ: Վերջինիս կարմիր քարտ ցույց տալը սխալ էր: Գնդակը դիպավ նրա ձեռքին: «Օսերի» ֆուտբոլիստների հետ նման բան մի քանի անգամ կատարվեց, սակայն մրցավարը չարձագանքեց: Չեմ ցանկանում մրցավարության մասին խոսել: Միայն կասեմ, որ այն մեր օգտին չէր:**

Խմբային մրցաշարի ուղեգիր չկարողացավ նվաճել նաեւ Կիեւի «Դինամոն»: Առաջին խաղում սեփական հարկի տակ դինամոյականները ոչ-ոքի (1-1) էին ավարտել հանդիպումը հոլանդական «Այաքսի» հետ: Ամստերդամում «Դինամոն» պարտվեց 1-2 հաշվով: Դաշտի տերերը խաղը շահում էին 2-0 հաշվով ու միայն խաղավերջում Անդրեյ Շեւչենկոն 11 մ հարվածով «թրջեց» հաշիվը:

Անգլիական «Տոտենհեմը» վստահ ռեւանշ վերցրեց շվեյցարական «Յանգ Բոյզից» առաջին խաղում 2-3 հաշվով կրած պարտության դիմաց: Անգլիացիները 4 անպատասխան գնդակ ուղարկեցին մրցակցի դարպասը: Հանդիպման հերոսը Կրաուչն էր, որը հեթ-տրիկի հեղինակ դարձավ:

Դանիական «Կոպենհագենը» սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթելով նորվեգական «Ռոսենբորգին», ի հաշիվ առաջին խաղում մրցակցի դաշտում խփած գոլի (դանիացիները պարտվել էին 1-2 հաշվով), իրավունք ստացավ շարունակելու պայքարը: Խմբային մրցաշարի մասնակիցների թվում է նաեւ Սլովակիայի «Ժիլինան», որը 2-րդ խաղում էլ (առաջինում՝ 2-0) հաղթեց Չեխիայի «Սպարտային»: Խաղի ելքը վճռեց Սեսայի խփած միակ գնդակը:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հենրիխ Մխիթարյանը կխաղա Դոնեցկի «Շախտյորում»

ՖՈՏՈԼՈՒՐ

Armsport.am կայքը վկայակոչելով ուկրաինական Sport.ua եւ Football.ua ուկրաինական կայքերին, տեղեկացնում է Հենրիխ Մխիթարյանի «Շախտյոր» տեղափոխվելու մասին: Ըստ ուկրաինական լրատվամիջոցների, Դոնեցկի «Մետալուրգի» եւ Հայաստանի հավաքականի հարձակվողը երեկ պետք է պատշտոնապես ներկայացվեր որպես «Շախտյորի» խաղացող: Նույն աղբյուրների համաձայն, 21-ամյա հայ ֆուտբոլիստի համար Միրչա Լուչեսկուի թիմը 15 մլն դոլար է վճարել «Մետալուրգին», թեեւ այլ աղբյուրների տվյալներով, Մխիթարյանի տրանսֆերային արժեքը 4 մլն դոլար է:

Հետաքրքրական է, որ երեկ առավոտյան Դոնեցկի «Շախտյորի» պատշտոնական կայքում զետեղված է եղել, որ Մխիթարյանն օգոստոսի 30-ին տեղափոխվելու է Միրչա Լուչեսկուի թիմ: Իսկ երբ վերը նշված կայքերը տեղեկացրել են Մխիթարյանի տեղափոխության մասին, «Շախտյորի» կայքում տեղեկատվությունն անմիջապես հանվել է:

Վերջին օրերին խոսակցությունները շատ էին Հենրիխի «Շախտյոր» տեղափոխվելու մասին: Ճիշտ է, Հենրիխն իր պատշտոնական կայքում նշել է, որ առայժմ «Շախտյորից» հրավեր չի ստացել: Ամեն դեպքում համոզված ենք, որ տեղափոխությունը տեղի կունենա եւ Հենրիխն ավելի բարձրակարգ թիմում կխաղա:

Հայկական եռյակի հաղթական մեկնարկը

Հունաստանի Սալոնիկ քաղաքում մեկնարկել է շախմատի ավանդական 7-րդ մրցաշարը, որի 68 մասնակիցների թվում են Հայաստանի երեք շախմատիստներ՝ գրոսմայստեր Զավեն Անդրեասյանը, Աղասի Ինանցն ու Վահե Բաղդասարյանը: Մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի ուկրաինացի Յուրի Դրոզդովսկին (2624), որին հետեւում են թուրք Սուաթ Աթալիկն (2607) ու Զավեն Անդրեասյանը (2588):

Ըստ մրցաշարի պատշտոնական կայքի, առաջին տուրը բավական արդյունավետ էր: Կայացած 32 պարտիաներից միայն երեքում գրանցվեց ոչ-ոքի: Երկու պարտիա չկայացավ մրցակիցներից մեկի բացակայության պատճառով: Ուրախալի է, որ մեր շախմատիստների եռյակը հաղթանակով սկսեց մրցաշարը: Զավեն Անդրեասյանը սեւերով հաղթեց հույն Ասս Ասիմենիոսին: Աղասի Ինանցի մրցակիցը ռուսաստանցի Ալեքսեյ Պոլեչիկովն էր, իսկ Վահե Բաղդասարյանը մրցեց հույն Ալեխանդրո Գուլիարոսի հետ: Մեր երկու շախմատիստներն էլ խաղում էին սեւերով:

«Բարսելոնի» երկրորդ տիտղոսը

Իսպանական «Բարսելոնը» նոր մրցաշրջանում իր 2-րդ տիտղոսը նվաճեց: Իսպանիայի Սուպերգավաթը նվաճելուց հետո Խոսեպ Գվարդիոլայի սաները հաղթող դարձան ավանդաբար անցկացվող ակումբի հիմնադիր, շվեյցարացի Ժոան Գամպերի գավաթի խաղարկությունում:

Այս մրցաշարն անցկացվում է 1966-ից «Բարսելոնի» առաջին նախագահ Ժոան Գամպերի պատվին: 1966-1996-ին «Բարսելոնից» բացի մրցաշարին մասնակցում էին մի շարք թիմեր: 1997-ից գավաթը խաղարկվում է ընդամենը մեկ խաղում:

Գավաթը կրկին վիճարկեցին «Բարսելոնն» ու «Միլանը»: Խաղից առաջ մարզադաշտի ցուցասախտակին չեմպիոնների լիգայի 2006-ի եզրափակիչից կադրեր ցուցադրեցին, որոնցում թիմի իր խաղընկերների հետ ընդհանուր ուրախությունը կիսում էր ներկայումս «Միլանում» հանդես եկող Ռոնալդինյոն: Տրիբունաները նրա մուտքը խաղադաշտ ծափողջույններով ուղեկցեցին: Նա նույնիսկ լուսանկարվեց «Բարսելոնի» հետ, ապա վերջինիս ավագ Կառլոս Պույոլի հետ նույն հաճելի արարողությանը մասնակցեց «Միլանի» կազմում:

Խաղն անցավ լարված պայքարում: 47-րդ րոպեին Դավիթ Վիլյան առաջ մղեց «Բարսելոնին», սակայն 20 րոպե անց Ֆիլիպո Ինձագին վերականգնեց հավասարակշռությունը: Հաղթողը որոշվեց 11 մ հարվածարարով: «Բարսելոնը» հաղթեց 3-1 հաշվով եւ 34-րդ անգամ արժանացավ պատվավոր մրցանակին:

Կալիտվինցեւը գլխավորեց Ուկրաինայի հավաքականը

Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիան ընդունել է ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Միրոն Մարկեւիչի հրաժարականը: Սեպտեմբերի սկզբին Լեհաստանի եւ Չիլիի հավաքականների հետ ընկերական մրցախաղերին Ուկրաինայի ընտրանին կնախապատրաստի Յուրի Կալիտվինցեւը: Այս առնչությամբ Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Գրիգորի Սուրկիսը հետեւյալն է նշել. «Սա չի նշանակում, որ մենք միայն երկու խաղ ենք վստահում Կալիտվինցեւին: Այդ խաղերից հետո նա ֆեդերացիա կներկայացնի հավաքականի ծրագիրը եւ կփորձի համոզել, որ մենք կարող ենք նվաճել Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Այդ ժամանակ էլ կվերադառնանք նրա հարցին»:

Ըստ «Սպորտս էքսպրեսի», շվեդ հանրահայտ մարզիչ Սվեն Գորան Էրիկսոնն արդեն իր թեկնածությունն է առաջարկել Սուրկիսին: Էրիկսոնն աշխարհի առաջնությունում գլխավորում էր Կոտ դ' Իվուարի հավաքականը:

Ուկրաինական ֆուտբոլում ներկայում ուժեղ հակամարտություն է ծավալվել Սուրկիս եղբայրների (Գրիգորին ֆեդերացիայի նախագահն է, Իգորը՝ Կիեւի «Դինամոյի» նախագահը) եւ Արեւմտյան Ուկրաինայի մի քանի ակումբների միջեւ: Երբ հունվարին որոշվեց հրաժարվել Ալեքսեյ Միխայլիչենկոյի ծառայություններից, որին չէր հաջողվել ազգային հավաքականի հետ աշխարհի առաջնության ուղեգիր նվաճել, շատերը գլխավոր մարզչի պատշտոնում տեսնում էին «Շախտյորի» ռումինացի մարզիչ Միրչա Լուչեսկուին: Սակայն ակումբի սեփականատեր Ռինատ Ախմետովը, որը Սուրկիսների հետ հակամարտության գլխավոր դեմքն է, նույնիսկ լսել չէր ցանկանում հավաքականի մասին: Արդյունքում փետրվարին հավաքականի ղեկը հանձնվեց «Մետալիստի» գլխավոր մարզիչ Միրոն Մարկեւիչին, իսկ օգնական նշանակվեց Յուրի Կալիտվինցեւը: Եվ ահա վերջինս առայժմ 2 խաղով նշանակվել է ազգային հավաքականի գլխավոր մարզիչ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 26/08/2010 21:39 Page 1

ԱԶԳ **Օրվա հետքերով**

Հայաստանից է սկսվում նորը, ինչպես 1988-ին...

Քաղաքական աշունը դեռ ծույլ առաջ կգնա

Մի քանի օրից կսկսվի օրացուցային եւ քաղաքական աշունը: Քաղաքական դաշտի այն հիմնական պրոբլեմները, որոնք կային գարնան վերջին-ամառվա սկզբին, այդպես էլ մնացին չլուծված: Ինչպես մի տարի առաջ եւ ողջ մի տարի քաղաքական ուժերն իրենց հարցերը մի կողմ դրած զբաղվեցին հայ-թուրքական արձանագրություններով, ու ո՛չ ընդդիմադիր բազմագլուխ բեւեռը, ո՛չ հնացած իշխանական կոնգլոմերատը ժամանակ չունեին բյուրեղացնելու եւ հասկեցնելու իրենց ձեւն ու բովանդակությունը, այնպես էլ ողջ ամառ դրանով ոչ որ գոնե հրապարակային չզբաղվեց: Մանավանդ այս վերջին օգոստոս ամիսը բոլորը կրկին կենտրոնացան արտաքին-քաղաքական կարեւոր իրադարձության՝ ՌԴ նախագահի Հայաստան պետական այցի եւ ստորագրված կարեւոր պայմանագրերի վրա, իսկ մոտեցող ընտրություններին ընդառաջ գնալու համար արվելիք քայլերը, որոնք թվում էր, թե «Ժառանգության» եւ ՀՀՇ համագումարները gրցամ տվեցին, հետաձգվեցին, եւ երեւում է դեռ էլի դանդաղելու են, մինչեւ ժամանակը կսիրի անշարժության մատնված մեր քաղաքական դաշտին իրար անցնել: Ամեն դեպքում մեկ օր առաջ ՀԱԿ-ի քաղխորհրդի փակ նիստում եթե որոշակիություն լիներ՝ այդ մասին կտարածվեր մամուլով: Մինչդեռ հայտնի է միայն, որ այստեղ եւս տարաձայնային եւ աշխարհաքաղաքական խնդիրներից է խոսվել (Տեր-Պետրոսյանը վերլուծություններ է արել այս թեմաներով), բայց նաեւ հստակ գնահատականներ չեն տրվել, քանի որ դիրքորոշումների հստակեցման համար դեռ վերլուծելու ժամանակ է պետք ՀԱԿ-ականներին: Այսինքն՝ դեռ հետեւելու են իրավիճակին, եւ մինչեւ ՌԴ նախագահը Ադրբեջան չգնա (սեպտեմբերին), դեռ հայտնի չդառնա Ադրբեջանի հետ կնքվելիք պայմանագրերի բովանդակությունն ու ուղղվածությունը, ոչ ՀԱԿ-ը, ոչ էլ առանձնապես մյուս քաղաքական ուժերը չեն կարողանալու պատասխանել համարյա հնչող համլետյան հարցին՝ Ռուսաստանի նոր պայմանագրով պատրոնաժությունը մեծ հաշվով օգո՞ւտ, թե վնաս է Հայաստանին (չգիտենք՝ սեպտեմբերի 17-ի հանրահավաքին արդեն կողմնորոշված կլինե՞ն ՀԱԿ-ում): Նույն իրավիճակն է նաեւ մյուս քաղաքական ուժերի մոտ՝ Դաշնակցությունից բան կհասկանաք գուցե սեպտեմբերի 2-ի հանրահավաքում, «Ժառանգությունը» վերջին երկու դիրքվածով խրվել է բնապահպանական եւ քաղաքաշինական խնդիրներ մեջ, իսկ բոլորը մեծ հաշվով վերջին հայ-ռուսական ռաունդից հետո դեռ հստակեցնում են իրենց քաղաքական եւ աշխարհաքաղաքական գնահատականները՝ քաղաքական դաշինքների կամ կոնֆիգուրացիաների մասին մտածելու ժամանակ չեն ունեցել: Մի բան ակնհայտ է, սակայն, որ նախաձեռնությունն ու ուժեղ խաղը այժմ իշխանությունն ինքն է տանում: Այլ խնդիր, թե ո՞վ կամ ի՞նչ է այդ իշխանությունը, ո՞ր միավորներն են հատկապես այդ իշխանությունը կազմում, ո՞ւր են քշում իրենց երիվարը, Քոչարյանը կամ ուրիշները քաղաքական ուժ ստեղծո՞ւմ են վերջապես, թե՞ ոչ: Լավ է, թե՞ վատ՝ նախագահ Սարգսյանը այս էլ երկրորդ անպասելի քայլով քաղաքական գործընթացները կառավարելու թելն իր ձեռքում է պահում՝ արտաքին քաղաքական խաղաթղթով: Ուրիշ բան, որ նա եւս դեռ բացահայտ չի ցուցադրում բուն քաղաքական դաշտի իր խաղաթղթերը: Բնականաբար նա միայն ՀՀԿ-ի հետ չէ, որ կուզենա առաջ տանել իր քաղաքական հեռանկարը, քանզի եթե քաղաքական ուժը մեկ տասնամյակ շարունակ նույն մարդկանցով եւ նույն մոտեցումներով կառավարում է, այն էլ այսպիսի բարդ ժամանակ, երբ սոցիալ-տնտեսական վիճակը քանի գնում վատթարանում է միջազգային, ապա եւ տեղական գործոնների պատճառով, այդ ուժի համեմատաբար նոր լիդերը հստակ պետք է մտածի սեփական, իր ձեռքով ստեղծած հենարանների, նոր, թարմ ուժերով ժողովրդին ներկայանալու մասին. հակառակ ինքնասպանությունն է, իսկ ինքնասպանները երկրի նախագահ չեն լինում: Քանի որ նա գործընթացներն իր ձեռքում է պահում, հստակ այս ուղղությամբ եւս մտածում է: Ընդդիմությունն էլ հստակ սպասում է նախ իշխանական կողմից եկած իմպուլսներին, այլապես ամռանը մի նոր բան կմտածեր: Բայց հազիվ թե հայտնի եւ բոլորին հոգուի ավելի սթափ է, քան մեր ոգեւորված իշխանական քաղաքականները: Բայց որ շատ կարեւոր, տարածաշրջանային առումով հեռուն գնացող գործընթացների նախադուռն էր հայ-ռուսական ռաունդը, սա անշուշտ այդպես է՝ էլի Հայաստանից սկսվեց նորը, ինչպես 1988-ին...

Հասկանալի է, որ Հայաստանի անվտանգության առումով գործնական օգուտ, այո, կա վերջին դարակազմիկ պայմանագրերից, բայց առավել կարեւոր է հոգեբանական ազդեցությունը տարածաշրջանի մասնակիցների ու խաղացողների վրա-(Թուրքիա, Եվրոմիություն, ԱՄՆ), որի հետեւանքը ռազմական գործողությունների հավանականության նվազումն է երեւի: Բայց չափից դուրս ոգեւորվել, թե ղարաբաղյան խնդրի ռազմական լուծումն այսպիսով զրոյի է հասցվում, սա չափազանց է. այդ դեպքում ինչո՞ւ է ուզում Ադրբեջանը C-300 ձեռք բերել, հո դրանք միայն բուտաֆորիայի կամ ռազմական բանսի համար չե՞ն միայն... Չնայած ընդհանուր հաշվով հավանաբար Ռուսաստանն իր ներկայության եւ ուժի ցուցադրման հարց է լուծում՝ մյուս խաղացողներին տեղը դնելով, սա էլ կա, այն էլ հստակ հենց այդ խաղացողների թողտվությամբ. սրա ապացույցն այն է, որ նա զինում է ոչ միայն Հայաստանին: C-300 կա ոչ միայն Հայաստանում, այլեւ Աբխազիայում, եւ ամենայն հավանականությամբ հաջորդ ամիս կայանալիք Մեդվեդեւի՝ Ադրբեջան այցի ընթացքում կլինի պայմանագիր դրանք Ադրբեջանում տեղադրելու մասին: Հարավային Օսիայում այդ կայանները տեղակայելու մասին լուրը չնայած առայժմ ժխտվեց, բայց ծուխն առանց կրակի չի լինում, իսկ ծուխը խոսում է տարածաշրջանում Ռուսաստանի նկրտումների մասին: Թուրքիային, Եվրոմիությանն ու տարածաշրջանում շահեր ունեցող բոլոր միավորներին ուղղված մեսիջի իմաստն այն է, որ առանց Ռուսաստանի հետ հաշվի նստելու՝ այստեղ որեւէ հարց չի լուծվելու: Անպատասխան մնաց Հայաստանի համար այն հարցը, թե մեր որ շահի համար հենց հիմա որոշեցին փոխել նախկին, դեռեւս 10 տարի գործելիք պայմանագիրը: Պատասխան չունի այն հարցը, որ երբ, այնուամենայնիվ ինչ-որ մեկը Ադրբեջանին դդի հարձակվել Ղարաբաղի վրա, ինչպե՞ս է պահելու իրեն Ռուսաստանը, քանի որ այստեղ ունի ռազմաբազա, Ադրբեջանին էլ C-300 է վաճառելու, նրա զինմիավորների մի մասը մյուս մասի դեմ հո՞ չի կռվելու, կամ իր մի դաշնակցի կողմից հո մյուս դաշնակցի դեմ չի՞ կռվելու:

Բազմաթիվ հակափաստարկներից մեկն էլ այն է, որ, այնուամենայնիվ, նվազում է Հայաստանի անկախությունն այս պայմանագրով:

Եթե վերանանք հուզական գործոնից՝ եղբայր Ռուսաստան եւ այլն, եւ խնդրին նայենք միայն պրագմատիզմի պատուհանից՝ մի շարք հարցեր դեռ պատասխան չունեն: Այնպես որ մեր քաղաքական դաշտն իր գործունեության կանոնակարգման, համագործակցության դաշտ ստեղծելու եւ նոր ուժեր գոյացնելու խնդիրների հետ մեկտեղ՝ առաջիկա ամիսը դեռ զուգահեռ խոսելու է հայ-ռուսական վերջին պայմանագրի ու դրա հետ կապված տարածաշրջանային նոր զարգացումների շուրջ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՈՐԱՄՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Մեքենաների տեխզննման ոլորտը ազատականացվեց

Մանուկ Վարդանյանը փաստեց, որ դա կլինի բոլորի օգտին

Ինչպես հայտնի է, 2007-ից տեխզննման կայանները դուրս եկան ճանապարհային ոստիկանության համակարգից եւ մասնավորեցվեցին: Կառավարության երեկվա որոշմամբ կատարված փոփոխություններով, տեխզննման կայանների քանակի (31) սահմանափակումը վերացվեց, եւ ամբողջությամբ ազատականացվեց տեխզննության կայանների գործունեության կարգը: Այս մասին լրագրողներին մանրամասներ ներկայացրեց տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը:

Ինչպես հայտնեց նախարարը, նախկինում որոշված էր, որ յուրաքանչյուր տեխզննման կայան կոնկրետ տարածք պետք է սպասարկի: Օրինակ՝ Աբովյանի տեխզննման կայանը իրականացնում է այդ տարածաշրջանի մեքենաների տեխզննումը: Նոր որոշմամբ արդեն յուրաքանչյուր մարդ կարող է ցանկացած տեղ անցկացնել իր մեքենայի տեխզննումը՝ անկախ նրանից, թե մեքենան որտեղ է հաշվառված, եւ սեփականատերը որտեղ է բնակվում:

Հաջորդ կարեւոր փոփոխությունն այն է, որ բացի վերոնշյալ 31 տեխզննման կայաններից, նման կայաններ կարող է հիմնել եւ այդ գործունեությամբ զբաղվել ամեն մի ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Այսինքն՝ այդ 31 քանակի կայանների սահմանափակվածությունը վերանում է, եւ միջգերատեսչական հանձնաժողովի միջոցով նորից կարելի է մրցույթներ անկացնել: «Դա կլինի բոլորի օգտին», ընդգծեց նախարարը:

Տեղեկացնելով, որ մեքենաների տեխզննման վճարը կազմում է 8 հազար դրամ, Մանուկ Վարդանյանը փաստեց, որ այդ գործընթացում կան չարաշահման դեպքեր: Հետեւաբար, ազատականացմանը հաջորդող քայլը պետք է լինի խիստ վերահսկողության իրականացումը այստեղ: Մինչ այժմ, ըստ տրանսպորտի եւ կապի նախարարի, դա կարող էր հավելյալ խնդիրներ առաջացնել: Քանի որ կան մարզեր (Սյունիք, Լոռի, Վայոց ձոր), որտեղ մեկ կամ երկու կայաններ ունեին, այդ կայաններից որեւէ մեկում խախտման համար գործունեության կասեցման դեպքում, մարդիկ հարկադրված կլինեին գնալ հարեւան մարզում տեխզննում անցկացնել, ինչն, անշուշտ, դժգոհություններ կառաջացներ նրանց մեջ:

«Ազգի» հարցին, թե ո՞ր փուլում է սպիտակ համարանիշներով տախիների օրինականացման գործընթացը, տրանսպորտի եւ կապի նախարարը պատասխանեց, որ քանի դեռ կան սպիտակ համարներով տախիներ, նրանց դեղին համարների տրամադրման գործընթացը շարունակվում է: «Մենք ընտրել ենք համոզելու ճանապարհը: Օրինակ՝ այսօր 18 հոգու լիցենզիա ենք տրամադրել», ասաց Մանուկ Վարդանյանը:

Ա. Մ.

Հրդեհ «Հին Երիվան» ռեստորանում

Երեկ առավոտյան հրդեհ է բռնկվել Հյուսիսային պողոտայի եւ Թումանյան փողոցի անկյունադարձում գտնվող «Հին Երիվան» ռեստորանի տարածքում: Դեպքի վայր ժամանած արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ ծառայության ջանքերով 2-րդ հարկում բռնկված հրդեհը մարվել է: Մինչեւ հրդեհը կմարվեր՝ դեպքի վայր էին ժամանել Երեւանի ոստիկանապետ Ներսես Նազարյանը, ԵՃ ոստիկանության պետ Արսեն Արշակյանը եւ Կենտրոն վարչական տարածքի ոստիկանապետ Աշոտ Կարապետյանը: Մինչեւ ժամը 15.00-ն փակվել էին Թումանյան փողոց մտնող ճանապարհները, եւ հրշեջները իրականացնում էին հրդեհաշիջման աշխատանքներ ու նաեւ ուսումնասիրություններ, պարզելու հրդեհի առաջացման պատճառները: Ըստ նախնական ենթադրության՝ հրդեհը կարող էր բռնկվել էլեկտրալարերի բռնկումից: Սակայն դա քիչ հավանական էին համարում մասնագետները ու պարզաբանում էին, որ շենքը մի քանի տարվա շինություն է եւ որակյալ վիճակում է: Մնում է ենթադրել, թե ինչից է բռնկվել «Հին Երիվան» ռեստորանում հրդեհը, այն էլ առավոտյան ժամը 9-ին մոտ:

Մ. Մ.

Սեւան-Դիլիջան թունելում այրվել է ավտոբուս՝ կան տուժածներ

Ինչպես տեղեկացանք արտակարգ իրավիճակների նախարարության լրատվական կենտրոնից, օգոստոսի 26-ին, ժամը 15.16-ին ահազանգ է ստացվել, որ Սեւան-Դիլիջան ավտոճանապարհին՝ թունելում հրդեհ է բռնկվել: Դեպքի վայր են մեկնել Սեւանի եւ Դիլիջանի հրշեջ-փրկարարական ջոկատները: Պարզվել է, որ թունելում այրվում է «ԿՎԶ» մակնիշի ավտոբուս: Այրվածքներ ստացած վարորդը ինքնուրույն դուրս է եկել թունելից: Ժամը 16.17-ին դեպքի վայրից հաղորդել են, որ հրդեհը մարվել է, թունելում հայտնաբերվել են մեկ տարեկան երեխայի եւ 30-40 տարեկան կնոջ դիակներ: Կան նաեւ այրվածքներ ստացած, Վարդենիսի 3 բնակիչներ:

Թունելը ժամանակավորապես փակվել է երթեւեկության համար:

Մ. ՄԱՎՈՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հրավիրում է վանական կյանքով ապրել ցանկացողներին: Ընտրված միաբանների վանական կյանքը կկազմակերպվի Հայաստանյայց առաքելական սուրբ Եկեղեցու տարբեր վանքերում:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վանորեից տեսչություն (հեռ. /374 10/ 517-291):

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 26.08.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաճար» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: